

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
(ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)

ՍԻՐԱԿ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Հոդվածների ժողովածու

ԵՐԵՎԱՆ
ԸՆԴՏԱՐԱԳԵՏ
2008

32
-85

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
(ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)

ՍԻՐԱԿ ՀՈԿԴԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Հոդվածների ժողովածու

Զեմկեղծ բարեխաղաղության
իմ բարեկամ պր-ն Բարեբա
Սաֆրապյանին:
Անդրեանկ/Ե 10.06.09.

4204

ԵՐԵՎԱՆ
ԵԱՐՏԱՐԱԳԵՏ
2008

ՀՏԳ 32.001
ԳՄԳ 66
Հ 854

Տպագրված է համաձայն 2008 թ.
հրատարակչական պլանի
հաստատված (23.02.08) ԳԽ քննառով

Ք Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հոգիանցիայան Ա. Ս.
Հ 854 Քաղաքական կանխատեսումներ: Հոգվածների ժողովածու.-եր.:
 Ծարտարագետ, 2008.- էջ 48:
 Հոգվածաշարն ընդգրկում է հեղինակի Հոգիանցիայանի 1993, 1997, 1998 և 2000թ.թ. մամուլում լույս տեսած հոդվածները, որոնցում նրան հաջողվել է քաֆանցել վերջ մշված ժամանակաշրջանների քաղաքական բարդ գործընթացների ծայքերը և մի շարք երևույթների վերաբերյալ կատարել քաղաքական կանխատեսումներ: Դրանց մի մասն արդեն մեր օրերում գտնվում է իրականություն դառնալու ավարտական փուլում, իսկ մյուս մասում էլ առկա են ոչ հետափոր ապագայում նույնպես իրականանալու հիմնական միտումներ:
 Հոգվածաշարն կարող է ուշագրավ լինել քաղաքագետների, քաղաքականությանը գրողների և այդ ոլորտով հետաքրքրվողների համար:

Գրախոս՝
 պ.գ.թ., դոցենտ **Հ.Ս. Գևորգյան**
 Խմբագիր՝ **Հ.Բ. Պետրոսյան**

ԳՄԳ 66

ISBN 978-9939-55-130-2

© ՃԱՐՏԱՐԱՐԱԳԵՏ 2008 թ.
 © Ա.Ս. Հոգիանցիայան 2008թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5

1. ԻՆՉ ԱՊԱԳԱ Է ՍՊԱՍԿՈՒՄ ՄԻԱԲԵՎԵՌ
 ԱՇԽԱՐՀԻՆ..... 6

2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ.....9

3. ՄԻԱՅՅԱԼ ԵՎՐՈՊԱՆ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
 ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԵՎԵՌ..... 13

4. ՈՈՒԿԱՑՄԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՅԼԸՆՏՐԱՄՔ ԶՈՒՆԻ..... 16

5. ԱՄԵՐԻԿԱ ԱՇԽԱՐՀԱՄԱՍՏՆԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
 ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԵՎԵՌ..... 20

6. ԶԻՆԱՑՄԱՆԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
 ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԵՎԵՌ..... 23

7. ՀԱՅԱՑՄԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱԳԱՆ..... 26
 1.ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ..... 29
 2.ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ..... 32

8. ՍԵՎԾՈՎՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԹԱՂԵԼ
 ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՑՄԱՆԻ ԵՐԱՁԸ..... 36

9. ՎԱՏԱԴՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԴՐԱՎԵՐ..... 41

10. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՄՐԱՏԱՎՈՐ ԵԼԵՎԵԶՆԵՐԸ..... 44

Ներածություն

Հողվածների այս ժողովածուում առաջին անգամ հեղինակի կողմից փորձ է արվում ընթերցողին ներկայացնել այն ճշմարտությունը, որ քաղաքականության ոլորտում կանխատեսումներ կատարելը նույնպես իրական է: Ավելին, քաղաքական դեպքերի, իրադարձությունների, մեծամասշտաբ գործընթացների վերաբերյալ քաղաքական կանխատեսումների գիտելիքից օգտվելը ոչ միայն պետք է, այլև անհրաժեշտ է հատկապես ոչ այնքան բարենպաստ աշխարհագրական միջավայրում գտնվող այնպիսի երկրի համար, ինչպիսին ընդամենը 17 տարի անկախացած Հայաստանի Հանրապետությունն է:

Հարկ չիմարելով անդրադառնալ 6, 9 և 10-ից ավելի տարիների վաղեմություն ունեցող հողվածների բովանդակություններին առանձին-առանձին (համապատասխան եզրակացությունները թողնենք ընթերցողին), միայն հայցում ենք ընթերցողի ըմբռնողական վերաբերմունքը որոշ տվյալների ժամանակավիճակային համար, քանզի շատ բաներ 2007թ. բարձունքից դիտելով, բնականաբար, փոխվել են: Անշուշտ, եթե փոփոխման են ենթարկվել ինչ-ինչ թվեր կամ տվյալներ, ապա կանխատեսման օբյեկտը իրականություն է դարձել արդեն վերջին տարիներին կամ էլ իրականություն դառնալու գործընթացում է: Նշենք նաև, որ տողերիս հեղինակը հավակնություն չունի, այսպես կոչված, «պայծառատեսի» կեցվածք ընդունելու, քանզի խորապես գիտակցում է խնդրո առարկայի և՛ լրջությունը, և՛ բարդությունը:

Հեղինակի կողմից

ԻՆՉ ԱՊՐԱՎԱ ԵՄ ԱՊԱՍՈՒՄ ԽՆԴՐԵՎԵՌ ԱՇԽԱՐԴՆՆ

Երկրորդ աշխարհամարտից շատ ժամանակ չանցած՝ Արևմուտքը ԱՄՆ-ի գլխավորությամբ սկիզբ դրեց ԽՍՀՄ-ի դեմ պայքարի նոր՝ «սառը պատերազմի» ռազմավարությանը: Այդ քաղաքականության հիմնական նպատակը «չարիքի կայսրության» կործանումն էր, որի իրականացման համար Արևմուտքը ներդրեց անհաշիվ զուսպներ: Վերջապես Արևմուտքը և նրա ռազմաքաղաքական ու ֆինանսարդյունաբերական շրջանների առավել ազդեցիկ ուժերը հասան իրենց նպատակին: ԽՍՀՄ-ը փլուզվեց: Տառացիորեն 4-5 տարվա ընթացքում վիթխարժանավալ կայսրությունն իր արբանյակ պետությունների հետ միասին հսկա դիտարկվի նման տապալվեց: Մինչ այդ երկրներն ղեկավարվող աշխարհը կախարդական զավազանի մի հարվածով դարձավ միաբևեռ: Չամաշխարհային քաղաքականության մեջ դրության տերը դարձավ միակ գերտերությունը՝ ԱՄՆ-ը: Ներկայումս երկրորդ գերտերության՝ ԽՍՀՄ-ի ոչնչացման հետևանքով համաշխարհային քաղաքական հարաբերությունների համակարգում առաջացել է մի վակուում, որը, ինչպես ցույց են տալիս իրադարձությունների անկանխատեսելի զարգացումները, կարող է դառնալ քաղաքակրթության աքիլիսյան գարշապարը:

Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի կողմից մշակված ԽՍՀՄ-ի կործանման ծրագիրը երկար սպասեցճեմ էլ չուվեց: Ուրվագծվում են նաև այդ ծրագրից անկախվող արդյունքները: Աճնշուտ, այդ գործում քիչ դեր չխաղաղ մաս կայսրության քաղաքական համակարգի սպառավաճությունը, բացառապես կեղծիքով ծաղեցյալած ապագային պաշտպանության և բարոյական առումով քայքայվածության ներքին նախադրյալների առկայությունը:

Անկախված, ամեն ինչ հստակ հաշվարկված էր: ԱՄՆ-ին հակակշռող գերտերությունը վերացվեց: Սակայն օրինաչափ հարց է առաջանում: ԽՍՀՄ-ի կործանման հետևանքով ստեղծված իրավիճակի կառավարման որևէ սցենար կամ մոդել արդյոք գոյություն ունի: Արդյո՞ք հաշվարկված է, թե որ դեպքում և երբ է մարդկությանն ավելի շատ վտանգ ապառնում՝ հակակշռող գերտերության գոյությունը, թե՞ բացակայությունը: Այսպես, ինչպես ինչ, որ նման համաշխարհային բնույթի հիմնահարցի պատասխանից խուսափելը դիտվի մյուսպես պատասխան: Չակակշի բևեռից զրկված աշխարհում այսօր տեղի են ունենում գործընթացներ, որոնք կարող են ինքնաբերաբար յուրօրինակ «հակակշի» դեր խաղալ: Այդ գործընթացների հատկապես առանձնանում են սնկի պես աճող լուկա կոնֆլիկտներն ու տարածաշրջանային պա-

տերազմները: Այսպես կոչված «պահածոյացված» պատերազմի օջախներով հարուստ է հատկապես նախկին ԽՍՀՄ-ի տարածքը: Էլ չենք խոսում այն մասին, որ արդեն տարիներով ձգձգվող հայ-ադրբեջանական, արբազա-վրացական պատերազմները, վրաց-օսական, օսինգուշական մերթ ընդ մերթ մարդը ու կրկին բռնկվող կոնֆլիկտները, Չյուսիսային Կովկասի լեռնական ժողովուրդների կոնֆեդերացիայի հնարավոր միջամտությունը արբազա-վրացական հակամարտությանը, ռուս-ուկրաինական քաղաքական հարաբերություններում պարբերաբար նկատվող առճակատումները, Ավերդուկսկի մարզի, Պրիմորիեի երկրամասի, Բուրյաթիայի, Սախայի (Յակուտիայի) Չանրապետությունի՞նք՝ բուն Ռուսաստանից անջատվելու և անկախ պետություն կազմելու գործընթացները, Տաջիկստանի սահմանամերձ բախումները և վերջիններիս ռուսական զինուժի մասնակցությունը հիմք են տալիս ենթադրելու, որ վերոհիշյալ կոնֆլիկտներն ու բռնկված պատերազմները կարող են ընդարձակել իրենց աշխարհագրությունը: Եթե վերը բնութագրվածներին ավելացնենք նաև հարավսլավական ճգնաժամի համառոտելի չլուծվող և առկայված հարցի նկատմամբ Արևմտյան Եվրոպայի ունեցած տազմապը, ապա ազգամիջյան հարաբերությունների ընդհանուր համակարգում պատերազմի միջոցով «խաղաղություն հաստատելու» նկատմաների վերաբերյալ պահանջարկումները դառնում են անբողոքական: Առավել վտանգավոր միտումը, որ նկատվում է ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ռազմաքաղաքական ազեցության նոր ուղորներ ձեռք բերելու հավակնության տատաչող երկրների փոխտարաբերություններում, այն է՝ «պատերազմի, որ խաղաղ պարես» ինչ հոռու-մարած սկզբունքը սատիճանաբար դառնում է գերիշխող: Եվ այն վերծրեց, որ արվում են ԱՄԿ-ի, ԵՄՉՊ-ի ու միջազգային քաղաքական ու տնտեսական այլ կազմակերպությունների կողմից այս կամ այն տարածաշրջանում խաղաղություն հաստատելու նպատակով (հսկ թե այդ նպատակը որքանով է անկեղծ, շահագրգիռ, այլ հարց է), առայժմ որևէ դրական արդյունքների չեն հանգեցրել: Խնդրո՞ւ առարկային վերաբերող դիտարկումները համոզում են, որ աշխարհում կան ազեցիկ ուժեր, որոնք օգտվելով հակակշի բևեռի բացակայությունից՝ ստեղծված վակուումը ձգտում են «լցնել» պարզապես պատերազմներով: Միաժամանակ, ինչպես վկայում է պատմության փորձը, միաբևեռ աշխարհի երկարատև կառավարումը պատրանք է և երաշխավորված ապագա ունենալ չի կարող: Գուցե ոմանք գտնում են, որ պատերազմի բոցերի միջից «կծնվա» երկրորդ հակակշի գերտերությունը:

Երկրներ աշխարհում ռազմական, տնտեսական և քաղաքական հարաբերությունների համակարգի գործառնան և ներքին տրամաբանական զարգացումների բնույթը այլ է, միաբևեռի պարագայում՝ բոլորովին այլ: Չեղևարար, ԽՍՀՄ-ի կործանման հետևանքով այսօր երկրագնդի վրա ստեղծվել է քաղաքակրթության համար անձանոթ այն-

այսի մի անկառավարելի իրավիճակ, որի շրջագծում դեպքերի ու իրադարձությունների հաջորդափոխության անկանխատեսելիությունը, օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների հնարավոր զուգորդման ընթացքում պատեհ առիթներից ոչ ճիշտ օգտվելը և ինքնապաշտպանական բնագոյների վրա ազդող ողջախոհության, քարոյահոգեբանական լծակների կտրուկ թուլացումը կարող են անդառնալի հետևանքներ ունենալ ոչ թե մեկ կամ մի քանի պետությունների համար, այլ՝ ամբողջ աշխարհի: Ուստի, կայսրություն կործանելը մի բան է, դրա վտանգավոր հետևանքներից խուսափել կարողանալը՝ մեկ այլ: Եվ այն պատկերացումները, թե մարդկության գլխին կախված կոմունիստական վտանգը՝ «չարիքի կայսրությունը», լրիվ վերացված է, մեղմ ասած, մոլորություն է: Չէ՞ որ, վերջին հաշվով, վտանգը մնում է վտանգ, և այնքան էլ կարևոր չէ, թե այն աշխարհագրական որ լայնությունից կամ բևեռից է սպառնալու մարդկությանը՝ Գյուսիսի՞ց, թե՞ Գարավից, Արևելքի՞ց, թե՞ Արևմուտքից: Երկրորդ է անկարևոր է վտանգի բնույթի խնդիրը՝ կոմունիստական է այն, թե շուվինիստական: Չասկանալի է, որ հետզհետե անող համաշխարհային քաղաքական լարվածությունը երբեք չի կարելի «չեզոքացնել» պատերազմների միջոցով, ընդհակառակը, համաշխարհային տիրապետություն հաստատելու ախտածին մտայնությունից իրաժարվելու դեպքում է միայն հնարավոր միաբևեռ կառավարվող աշխարհում փոքրիշատե հավասարակշիռ վիճակի ապահովում՝ մինչև նոր հակակշիռ հանդես եկող համակարգերի ծնվադրումը:

“ԵՐԿԻՐ” թերթ
28 հուլիս, 1993թ.:

Նկատի ունենալով խՍՀՄ-ի անկումից հետո համաշխարհային քաղաքականության մեջ տեղի ունեցող և տեղի ունենալիք իրադարձությունների գաղափարացանցում ոչ միանշանակ ընկալվող տրամաբանությունը, աշխարհն ապրում է ռազմա-քաղաքական ուժերի վերադասավորման մի փուլում, որի օրինակի հետևանքը կարող է լինել աշխարհաքաղաքական նոր բևեռների առաջացումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական Գերմանիայի պարտությունից հետո բխում էր, թե դաշնակիցներ խՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Անգլիան, իսկ որոշ ժամանակ անց՝ ճապ. Ֆրանսիան, իրենց մեջ ուժ կգտնեն հաղթահարելու միջպետական առկա աշխարհաքաղաքական հակասությունները և ձեռնամուխ կլինեն համաշխարհային քաղաքականության նոր սկզբունքների մշակման աշխատանքներին: Իսկ թե ինչի վրա էր կառուցված ռոմանտիզմով հագեցած նման պատկերացումների համակարգը, դժվար է ասել: Դանենայդեպս, ինչպես վկայում են պատմական փաստերը, աշխարհի ժողովուրդները այդպիսի ակնկալիքներ ունեին հաղթող տերություններից: Սակայն փոխաբերելով, 1946 թ. մարտի 5-ին Ու. Չերչիլի՝ ԱՄՆ-ի Ֆուլտոն քաղաքում արտասանած ճառում դրվեց Արևմուտք- Արևելք աշխարհաքաղաքական նոր սկզբունքների վրա մշակված հակասությունների նոր փուլի սկիզբը, որը մարդկությանը հայտնի է «սառը պատերազմ» անվանումով: Որոշ ժամանակ անց, խՍՀՄ-ի դեմ առավել կազմակերպված պայքար մղելու նպատակով, ԱՄՆ-ի և Անգլիայի ամենակտիվ նախաձեռնությամբ և աջակցությամբ, 1949թ. ստեղծվեց Գյուսիսատլանտյան ռազմա-քաղաքական դաշինքը՝ ՆԱՏՕ-ն, որը և հետագայում դարձավ «սառը պատերազմի» ռազմավարության իրագործման գլխավոր գործիքը: Ինչպես և ենթադրվում էր, խՍՀՄ-ը և չուշացրեց հակաքայլը. Խորհրդային Միության նախաձեռնությամբ 1955թ. ստեղծվեց սոցիալիստական ժամաքրի մեջ մտնող երկրների արևելյան միավորումը, որը կոչվեց Վարշավայի դաշինք, որն իր բնույթով նույնպես ռազմա-քաղաքական էր: Արդյունքում, գրեթե չորս տասնամյակ (թիչ ամիլի) Երկիր մոլորակը դարձավ այդ երկու հզոր ռազմա-քաղաքական դաշինքների միջև, ընթացող աշխարհաքաղաքական հակասությունների յուրօրինակ լուծումների,

ազդեցության նոր ոլորտներ ձեռք բերելու համար մղվող դաժան պայքարների քատերաբեմ: Ռազմա-քաղաքական բևեռներից մեկի՝ խՍՀՄ-վարչավայի դաշինքի կործանումից հետո աշխարհում տեղի են ունենում տարբեր բնույթի ու մասշտաբների իրարաբռնություններ, որոնք և իրենց խայտաբղետությամբ ու հակասականությամբ էլ պայմանավորում են արդի համաշխարհային քաղաքականության զարգացման հիմնական միտումների դիմամղված: (Եսախապես նշենք, որ տողերիս հեղինակը հստակ գիտակցում է ներկայացվող խնդրո առարկայի քարդու-թյունը ու այդ քարդության մասշտաբները և ամենևին էլ հավակնություն չունի այս կամ այն հարցի լուծման համար կրկնվեստ «դեղատոմսեր» առաջարկելու: Հետևաբար, սա համաշխարհային քաղաքականության զարգացման հիմնական միտումների ընդհանուր ու համառոտ ուրվագիծը տալու մի համեստ փորձ է):

Ուշադիր հետևելով աշխարհի պետությունների միջպետական հարաբերությունների զարգացման կամ հաստատման ներքին տրամաբանությանը, նկատում ենք, որ բոլոր ձգտում են իրականացնելու իրենց գոյատևման ռազմավարության ինչ-ինչ ծրագրեր:

Ուստի, անկախ այս կամ այն երկրի զարգացման մակարդակից, բոլոր ժողովուրդների համար էական է պատասխանել մի քանի պարզ, բայց և չափազանց բարդ հարցերի. ինչպե՞ս, ինչպիսի՞ մեխանիզմներով և, որ ոչ պակաս կարևոր է, ո՞ր երկրների հետ առավել սերտ ինտեգրացված պետք է մտնել երրորդ հազարամյակ:

Կարծես թե «սառը պատերազմի» դարաշրջանն ավարտվեց: Միաբեռն աշխարհը, հասկանալի բազում պատմաոճերով, իրեն այնքան էլ հանգիստ չի գտում (օրինակները բազմաթիվ են): Ուրեմն, կամա թե ակամա, օբյեկտիվ օրինաչափությունների պահանջով ծագում է համեմատաբար ՅԱՄԱՄԱՄԱՄԱՄԱՄ աշխարհաքաղաքական զարգացումները քիչ թե շատ ապահովող աշխարհ ունեցալու խնդիրը: Այստեղից էլ, որպեսզի որևէ մեկ բևեռի թեպարտմանը հակազդելու հետևանքները չդառնան վտանգավոր մարդկության քաղաքայի համար, մի քանի երկրներ (Ռուսաստան, Չինաստան և այլն) քաղաքակրթության բնակա-նուն ու երաշխավորված զարգացումը մտենում են ԲԱՅՄԱԲԵՆՆ ԵՆՆ ԵՆՆ խաղողյալների վրա կառուցված աշխարհում:

Միջին աշխարհում ներկայումս առկա կամ պոտենցիալ աշխարհաքաղաքական բևեռների ընդհանուր պատկերը ներկայացնելը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ, մեր կարծիքով, չափազանց կարևոր մի խնդրի՝ համաշխարհային քաղաքականության զարգացման միտումների մեթոդաբանական-ճանաչողական ՄՈՒՆՏԵԸ հանդիսացող երկու հիմնական մտեցումների բնութագրմանը: Ընդ որում, այդ երկու մտեցումները իրենց գործարդման մեխանիզմներով ու հետևաբարև նպատակներով գտնվում են բովանդակային հասկաղ-

րության մեջ, որով և պայմանավորված է դրանց բնութագրերի տարբերությունը:

Սառցին մոտեցման համաձայն՝ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱՎԱՆ ՅՈՒԴՈՒՆԱԿԱՆ կապերի զարգացման մոդելն իրականացվում է հետևյալ երկու ուղղություններով.

ա) այս կամ այն հզոր տերությունն իր ռազմավարական գործընկեր հանդիսացող պետության կամ պետությունների խմբի (բլոկի) հետ նախապես ճշգրտված ծրագրով ազդեցության նոր ոլորտներ ձեռք բերելու խնդիրներն են լուծում,

բ) տարբեր տարածաշրջաններում ազդեցության նոր ոլորտների ձեռքբերման գործընթացներին նախորդում և հաջորդում են այս կամ այն երկրին (երկրներին) համաշխարհային քաղաքականության մեջ «շահուրաբեր» նոր դաշնակիցներ «որսալուն» միտված գործողությունների հնարավոր բոլոր մեթոդներով ու միջոցներով ամրապնդելու փորձերը:

Երկրորդ մտեցման հիմնական խնդիրն է՝ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱՎԱՆ ՈՒՂՂԱՇԻԿ զարգացումների մոդելի գործադրումով փորձել քաղաքական, դիվանագիտական, ռազմական, տնտեսական և ֆինանսական հարկադրական ճանաչարհով շանտաժի ենթարկել այն «անհնազանդ» երկրին (երկրներին), որոնք իրենց գործունեությամբ չեն տեղավորվում «նոր աշխարհաքաղաք» կառուցող գլխավոր ճարտարապետների աշխարհաքաղաքական հաշվարկների մեջ...

Երկրորդ մտեցումը ևս իրականացվում է երկու փուլով: Սառցին փուլում կիրառվում են իր թե համաձայնակցային և ժողովրդավարական արժեքների (մարդու իրավունքների պաշտպանության և այլն) ոգուց բխող գործնական քայլեր՝ տարբեր բնույթի ու կարգի օգնությունների ցուցաբերում և այլն: Ըստ տրեյան, սա մեծ, փափուկ և քացառապես «բարեկամական» բնույթի երկվորման հարաբերությունների հաստատման փուլ է: Իհարկե, «բարեկամական» հարաբերությունները շարունակվում են մինչև այն պահը, երբ օժանդակություն հայցող երկիրը, «չգիտակցելով» համամարդկային և ժողովրդավարական արժեքների առաջնայնության դերը, փորձում է սեփական ազգային ռազմավարական շահերի պաշտպանությանը միտված ներքին ու արտաքին սկզբունքային քաղաքականություն վարել:

Երբ ձախողվում են առաջին փուլի հետապնդած նպատակները, սկսվում է երկրորդ՝ առավել կոշտ ու դաժան փուլը: Երկրորդ փուլում արդեն սկիզբ է առնում համամարդկային և ժողովրդավարական արժեքների ու միջազգային ընդունված նորմերի քցահայտ և գաղտնի շահարկումների բազմաթույք գործընթաց, որն ուղեկցվում է քաղաքական ու դիվանագիտական մեկուսացումներով, այդ երկրի դեմ տնտեսական ու ֆինանսական սանկցիաների կիրառումով, իսկ հարմար առիթի դեպքում՝ զործի է դրվում նաև ռազմական մեթեմայի ուժը:

Ի դեպ, աշխարհաքաղաքական ուղղաձիգ զարգացումների մոդելի գործադրման պերճախոս օրինակներ կարող են ծառայել Գարավայ-վական Բոսնիայի շուրջ կատարված և Կոստովի շուրջ ներկայումս կատարվող համալիր գործողություններն ու իրադարձությունները, Իրանի գրեթե պերճանենտ ռմբակարումները, Իրանի քաղաքական և դիվանագիտական մեկուսացումը և, վերջապես, Արցախի Աղբյուրների միջոցով բազմաշերտ քաղաքական և դիվանագիտական անհաջող փորձերը և այլն, և այլն:

Հատկապես ԽՍՀՄ-ի անկումից հետո համաշխարհային քաղաքականության մեջ տեղի ունեցող մակրոքաղաքություններն ու տեղատվությունները, որոնք կարող են նաև ազդեցիկ դրսևորումներ ունենալ, շատ բանով պայմանավորված են աշխարհում մեկ ռազմաքաղաքական բևեռի գոյությանը: Ուստի, թերևս չի կարելի պատահական համարել այն միտումի ուրվագծման առկայությունը, որ մի շարք զարգացած հզոր երկրներ՝ ռուսի կանգնելու փորձեր անող Ռուսաստանը, Չինաստանը, Ճապոնիան և Արևմտյան Եվրոպան, սկսել են գիտակցել միաբևեռ աշխարհի գոյության վտանգավորությունը և ձգտում են մշակել համաշխարհային քաղաքականության այնպիսի սկզբունքներ, որոնք պետք է թելադրեն աշխարհաքաղաքական տարբեր բևեռների շահերի Համադրման մեխանիզմների ստեղծմանն ուղղված գործնական քայլեր:

“ԵՐԿԻՐ” թերթ,
20 մայիս, 1998թ.

ՄԻԱՑՅԱԼ ԵՎՐՈՊԱՆ ՈՐՊԵՍ ԻՆՔԵՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՐՀԱԶՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԵՎԵՐ

Եվրոպան գտնվում է բարդ ու հակասական մի ժամանակաշրջանում, երբ պատմական անհրաժեշտություն է դառնում մոտ ապագայում նրա աշխարհաքաղաքական տեղի ու դերի ճշգրտումը:

Բազմաբևեռ աշխարհի ձևավորման գործընթացները լինելու են չափազանց բարդ ու հակասական և՛ տասնամյակների խնդիր: Առավել ևս, որ ներկա ժամանակաշրջանում աշխարհի միակ գերտերությունը՝ ԱՄՆ-ը, այնքան էլ չափազորված չէ նոր աշխարհաքաղաքական և ռազմա-քաղաքական բևեռների ձևավորմամբ, քանզի դրանք իր համար դառնալու են պոտենցիալ հակառակորդներ...

Այդուհանդերձ, որո՞նք են քաղաքական այն նախադրյալները, որոնք կարող են օբյեկտիվ հիմք դառնալ ռազմաբևեռ աշխարհի ձևավորման համար: Հաշվի առնելով աշխարհի տարբեր լայնություններում և տարածաշրջաններում գտնվող պետությունների աշխարհագրական դիրքը, նրանք վերահսկողության տակ առկա քմական հարստությունների պաշարը, քաղաքական, տնտեսական, ռազմական, ֆինանսական հնարավորությունները ռազմավարական պլանում, քնակչությամբ քանակը, երկրկական ընդհանրություններն ու ռազմաթիվ այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, կփորձենք համառոտ ներկայացնել այն նախադրյալները, որոնք կարող են պատճառ դառնալ Երկիր մոլորակի վրա ռազմա-քաղաքական հզոր բևեռների ձևավորման համար:

Արևմուտք-Արևելք ավանդական աշխարհաքաղաքական հակասությունների պատմությունը, թերևս, ամենահարուստն է և ամենատևակալը: Ներկայումս, սակայն, Եվրոպան ռազմա-քաղաքական առումով երկփեղկված է և չունի հզոր ու ազդեցիկ այն աշխարհաքաղաքական կայուն կարգավիճակը, որը կարող էր ունենալ:

Նման իրավիճակը կարելի է քաջատրեյ երկու հիմնական պատճառներով, առաջին՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև առկա դարավոր հակասություններով և, երկրորդ՝ Ռուսաստանի՝ Արևմտյան Եվրոպայի հետ ինտեգրվելու և այդ գործընթացն անվերջ խոչընդոտելու, աշխարհաքաղաքական հաշվարկների հիմքի վրա ռուսներին ռազմավարական առումով մեկուսացնելու միջև և մեր օրերը ձգվող բազում փորձերով:

Ըստ էության, Արևմուտք-Արևելք աշխարհաքաղաքական հակասությունները համաշխարհային մասշտաբով արևմտյան և արևելյան քաղաքակրթությունները ներկայացնող Ատլանտիզմի և Եվրասիականու-

ասած, խնդրո՞ր առարկային որ կողմից էլ մոտենանք, մինևույնն է, հանցելու ենք աշխարհաքաղաքական լուրջ հաշվարկներ ներառող հետևյալ եզրակացությանը. ինչ չափով Արևմտյան Եվրոպան հարկավոր է Ռուսաստանին, նույն չափով էլ վերջինս աճիւրճեշտ է Արևմտյան Եվրոպային:

Չինգեբորո: Ժողովրդավարական արժեքների հիմքի վրա իրավական պետություն կառուցելու ուղին ընտրած Ռուսաստանին հարկավոր է (ինչպես երբեք) առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների բոցերի մեջ իրեն ներքաշած Արևմտյան Եվրոպայի հետ միայն բարեկամանալ, այլ ոչ թե քշմամանալ: Չէ՞ որ սպազայում աշխարհաքաղաքական մի քանի բևեռների ձևավորման գործընթացները ստիպում են Ռուսաստանին վերջնականապես ճշգրտել իր ռազմավարական տեղն ու դերը համաշխարհային քաղաքական զարգացումների համատեքստում:

Վեցերորդ: Ռուսաստանը, մեր կարծիքով, այլընտրանք չունի: Երա առջև կա երեք ճանապարհ. առաջին՝ կա՛մ Մոսկվան միավորում է Արևմտյան Եվրոպայի (ի դեպ, ենթադրվում է, որ Արևելյան Եվրոպայի երկրների հետ՝ նույնպես) հետ և աշխարհին ներկայանում է իբրև «Եվրոպա»՝ անվանումը կրող աշխարհաքաղաքական բևեռի ամօտարելի բաղկացուցիչ մաս և նրա հիմնական շարժիչ ուժ, երկրորդ՝ կա՛մ հանդես է գալիս Ուկրաինայի և Բելառուսի հետ միասին չեմիկական ընդհանրությունների վրա հիմնված՝ որպես ինքնուրույն աշխարհաքաղաքական նոր բևեռ՝ իր ռազմա-քաղաքական դաշտում ներառելով ԱՊՊ կազմում գտնվող երկրների մեծամասնությանը, երրորդ՝ կա՛մ էլ ամերիկամացված Արևմտյան և Արևելյան Եվրոպաների և Չինաստանի արանքում պիտի ստանձնի ԲՈՒՅԵՐԻ՝ անշնորհակալ դեր՝ մեղմացնելով տարբեր բևեռների միջև առկա, հատկապես Արևմուտք-Արևելք, Յուսլա-Ֆարավ աշխարհաքաղաքական հակասությունները, կա՛մ էլ դրանցից ծագող հարվածները այս կամ այն չափով վերցնել իր վրա:

Այսպիսով, եթե Ռուսաստանին հաջողվի առաջիկա հինգ կամ տասը տարիների ընթացքում՝

ա) պահպանել իր տարածքային ամբողջականությունը և խուսափել միջլեքնիկական բախումներից,

բ) ԱՊՊ երկրների մեծամասնությանը պահել իր ռազմաքաղաքական ձգողականության դաշտում,

գ) լիարժեքորեն ինտեգրվել Արևմտյան Եվրոպայի համապատասխան կառույցներում,

դ) ԱՄՆ-ի և Չինաստանի հետ ունենալ բարիդրացիական և գործընկերության վրա կառուցված միջպետական հարաբերություններ,

ե) իսլամական ֆունդամենտալիզմի զարգացմանը և մեղմացմանը հեռու պահել իր սահմաններից (մուսուլման բնակչությունից), ապա

պատմության կամքով նրան է վիճակված տարբեր քաղաքակրթությունների պայքարները մարդասիրաբար հունավորելու առաքելությունը...

Իսկ թե վերը նշված սեփական ռազմավարական տեղն ու դերը ճշգրտող զարգացման ո՞ր ճանապարհը և ինչպիսի՞ աշխարհաքաղաքական կարգավիճակ կընտրի Ռուսաստանը, նկատելի կդառնա առաջիկա տասը տարիների ընթացքում: Որ Ռուսաստանը համաշխարհային քաղաքականության մեջ երկրորդական դերում լինելու և մնալու մտքի հետ երբեք չի կարող հաշտվել, պատմության կողմից ապացուցված փաստ է:

“ԵՐԿԻՐ” քերթ,
4 հունիս, 1998թ.

ԱՄԵՐԻԿԱՆ աշխարհամասը՝ որպես ինքնուրույն աշխարհաքաղաքական բևեռ

Եթե օբյեկտիվ հանգամանքների ճնշման տակ ԱՄՆ-ը հեռանա Եվրոպայից, ապա նրա վերադարձը դեպի Ամերիկա աշխարհամաս այլընտրանք չի ունենա: Դրա հետևանքով այդ աշխարհամասը ԱՄՆ-ի գլխավորությամբ կարժ ժամանակամիջոցում կդառնա աշխարհաքաղաքական հզոր բևեռ:

Եթե ԱՄՆ-ը դուրս մղվի Եվրոպայից, ապա նա ստիպված կլինի արմատապես փոփոխության ենթարկել ռազմավարությունը ինչպես Եվրոպական մայրցամաքում, այնպես էլ համաշխարհային քաղաքականության մեջ: Անշուշտ, ռազմավարական նման փոփոխությունը չի ենթադրում տարբեր բնույթի կապերի խզում Եվրոպայի հետ: Նախ՝ նշեմք, որ համաշխարհային քաղաքականության մեջ վճռորոշ դեր խաղացող այնպիսի մի գերտերություն, ինչպիսին ԱՄՆ-ն է, Եվրոպական քաղաքականության հեռանալու հնարավոր տարբերակը դժվար թե նախատեսած չլինի:

Թերևս հարկ է նշել այն օբյեկտիվ գործոնները, որոնք ԱՄՆ-ին, այսպես ասած, «պահում» էին Արևմտյան Եվրոպայում և այդ իմաստով ապահովում էին արևմտաեվրոպական երկրների շահագրգռվածությունը:

Առաջին: 2-րդ համաշխարհային պատերազմից ավերված Արևմտյան Եվրոպայի երկրների համար հույժ անհրաժեշտություն էր ֆինանսական լայնամասշտաբ օգնության ցուցաբերումը, որով պետք է կարժ ժամանակամիջոցում վերականգնվեր նրանց տնտեսությունները: Ել ԱՄՆ-ը ձեռք մեկնեց պատերազմից տուժած Եվրոպական երկրների՝ Մարշալի պլանի համաձայն աղյուսադրելով նրանց շուրջ 17 միլիարդ դոլար (հետպատերազմյան ժամանակաշրջանում դոլարի գնողականությունը բավականին բարձր էր): Իհարկե, Մարշալի պլանով նախատեսված ֆինանսա-տնտեսական օգնությունը հետապնդում էր նաև ռազմա-քաղաքական հեռահար նպատակներ:

Երկրորդ: Մտահոգված լինելով ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում վճռորոշ ներդրում ունենալու և այդ իմաստով Արևմտյան Եվրոպայում իր դիրքերն ամրապնդելու ԽՍՀՄ-ի հնարավորությունից, ինչպես նաև սոցիալիստական ճամբարի հետագա էլ ավելի ընդլայնման իրական հեռանկարից (չէ՛ որ Արևելյան Եվրոպայի երկրները ցերեպավեցին կոմունիստական համակարգում), Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի ամենաակտիվ նախաձեռնությանը ստեղծվեց ԼՍՕ-ն, որն արտասայ-

տում էր նաև արևմտաեվրոպական պետությունների տրամադրությունը:

Երրորդ: Ռազմավարական առումով առաջին և երկրորդ գործոնները, ըստ էության, ծառայեցվեցին ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական այն հաշվարկների վրա կառուցած քաղաքականությանը, որի նպատակապես իրագործումը պետք է տասնամյակներ հետո նրան ապահովեր աշխարհի միակ գերտերությունը լինելու և մնալու կարգավիճակը:

Կարծում ենք, որ այսօր լրացուցիչ փաստարկներ պետք չեն՝ ապացուցելու այն իրողությունը, որ ԱՄՆ-ը գրեթե բոլոր չափանիշները բավարարող 20-րդ դարի վերջերի թիվ 1 պետությունն է երկարատևի վրա: Հարկ է խոստովանել նաև, որ մինչև ներկա պատմական պահը ատլանտիզմի գաղափարախոսությանը հաղթանակ է տարել Եվրոպական գաղափարախոսության նկատմամբ և առայժմ նրան հաջողվում է ընդդարձակել իր ազդեցության սահմանները...

Իսկ այժմ նույնքան տրամաբանական հարց կարող է ծագել, որո՞նք են այն իիմնական պատճառները, որ նախադրյալներ են ստեղծել ԱՄՆ-ի ռազմա-քաղաքական ներկայությունը Եվրոպայում ավելորդ համարելու համար՝ մոտ ապագայի կտրվածքով (մինչև 2010 թ. ընկած ժամանակահատվածն է նկատի առնվում):

Պատճառ առաջին: Ներկայիս Արևմտյան Եվրոպան իր ռազմական (երեք միջուկային տերություն կա), տնտեսական և ֆինանսական բարձր զարգացած և ինտեգրացման գործընթացներին իրենց հավատարմությունն աշխարհին ապացուցած միասնական կառուցվածքներ և ենթակառուցվածքներ ունեցող հզոր քաղաքական-ռազմական մերտ միասնության ձգտող (միտումը հստակ է) աշխարհաքաղաքական միակոր է:

Պատճառ երկրորդ: Ա) ԽՍՀՄ –ը և Կարշավյան դաշինքը՝ որպես ագրեսիվ-զավթողական ռազմա-քաղաքական բևեռ (արևմտյան բնութագրված), այլև գոյություն չունի, բ) Արևելյան Եվրոպայի երկրները վեճահանդեր են տրամադրված բոլոր առումներով ինտեգրվելու Արևմտյան Եվրոպայի քաղաքական, տնտեսական, ռազմական, ֆինանսական և այլ բնույթի կառույցներում (արևելաեվրոպական երկրների աշխարհագրական դիրքերը աշխարհաքաղաքական հաշվարկներում չափազանց մեծ նշանակություն ունեն), գ) Ռուսաստանը հատկապես Արևմտյան Եվրոպայի դասական քջճամին չէ, և նա ունի մեծ ու իիմնավորված ձգտում՝ ինտեգրվելու Արևմտյան Եվրոպայի համապատասխան գրեթե բոլոր կառույցների մեջ:

Պատճառ երրորդ: Ռուսաստանի մերձեցումը Արևմտյան Եվրոպայի հետ, այսինքն՝ Արևմտյան Եվրոպայի+Արևելյան Եվրոպայի+Ռուսաստանի Դաշնություն=սույն աշխարհամասում ԱՄՆ-ի ռազմական-քաղաքական ներկայության պատմական անհրաժեշտության իիմքերի բացակայու-

թյան գիտակցում: Ահա հենց այդ իրողության գիտակցումն է կարող է ավելորդ դարձնել ԱՄՆ-ի գրեթե հինգ տասնամյակ տևած ռազմա-քաղաքական ներկայությունը Արևմտյան Եվրոպայում:

Յետևաբար, ենթադրվում է, որ ԱՄՆ-ը արդեն կունենա Եվրոպայից հեռանալու կամ իր աշխարհաքաղաքական նահանջն իրեն քնորոշ հետադարձությամբ և բարձր մակարդակով կազմակերպելու ծրագիր: Ուստի, պատահական չէ, որ ԱՄՆ-ը իր հայացքը դանդաղ, բայց վստահորեն ուղղում է Լատինական Ամերիկայի երկրների հետ ինտեգրվելու խնդրի լուծմանը:

Ինչպես հայտնի է, Լատինական Ամերիկայի մի քանի երկրներ (Վենեսուելա, Պերու, Կոլումբիա, Բրազիլիա և Արգենտինա) ունեն նավթի, ոսկու, ալմաստի, ուրանի հսկայական պաշարներ, որոնց շահագործման աշխատանքներում տարբեր չափի ու մասշտաբի մասնակցություն են ունենում ամերիկյան անդրազգային խոշորագույն ընկերությունները: Լատինական Ամերիկայի երկրների նկատմամբ քաղաքական-տնտեսական առումներով ուշադրություն դարձնելուն ուղղված լուրջ քայլ կարելի է համարել անցնող աշնան վերջներին Չիլիի մայրաքաղաք Սանտյագոյում տեղի ունեցած ամերիկյան մայրցամաքում գտնվող պետությունների գերակշիռ մեծամասնության ղեկավարների հանդիպման փաստը: Այս հանդիպմանը (նկատի ունենք նման մասշտաբներ ընդգրկող) առաջին անգամ մասնակցեցին ԱՄՆ-ի նախագահ Բիլ Բլիթթերը և Կանադայի վարչապետ ժան Կրետին:

"ԵՐԿԻՐ" թերթ,
22 մայիս, 1998 թ.

Չինաստանի ֆինանսատնտեսական ան-
նախադեպ զարգացման տեմպերը և նրա
ռազմա - քաղաքական հզոր ներուժն ար-
դեն իսկ վկայում են, որ այդ երկիրը դառ-
նալու է 21-րդ դարում աշխարհաքաղա-
քական ինքնուրույն բևեռ:

Պեն Սյաոպինի՝ 80-ական թվականների սկզբներին ձեռնարկած տնտեսական բարեփոխումների զարգացման տեմպերը սկսել են անհանգստացնել ոչ միայն նրա անմիջական հարևաններին, այլև՝ աշխարհի հզոր պետություններին: Միայն այն փաստը, որ ազգային համախառն արդյունքը տարեկան աճում է՝ նվազագույնը 4 տոկոսով, որը, միջազգային դիտորդների կարծիքով, համարվում է տնտեսական աճի լավագույն ցուցանիշներից մեկն աշխարհում, վկայությունն է այն բանի, որ Չինաստանը կունենա ռազմա-տնտեսական անհրաժեշտ բոլոր նախադրյալները 21-րդ դարում գերիզոր տերություն դառնալու համար: Չինաստանի տնտեսությանը զարգացման նոր քայլ է հաղորդելու Դոնկոնգի (Սյանգանի) միացումը մայր երկրին: Ըստ մասնագետների հաշվարկների, Դոնկոնգը համարվում է աշխարհի մասշտաբով ֆինանսական ամենահզոր կենտրոններից մեկը: Այս նահանգի բանկերում է գտնվում համաշխարհային ֆինանսական կապիտալի 40-45 տոկոսը: Գաղտնիք չէ, որ Չինաստանը, լինելով միջուկային տերություն և ունենալով զարգացման բարձր տեմպեր և մեծ ներուժ, վերջին շրջանում սկսել է «քաղաքական խանդով» վերաբերվել զարգացած երկրների աշխարհաքաղաքական հավակնություններին, որոնք այս կամ այն կերպ դրսևորվում են աշխարհի որևէ տարածաշրջանում: Ավելին. համապատասխան իրավիճակներում նույնիսկ դիմում է հակազդող հակաքայլերի: Այսպես, 1997թ. ամռանը ԱՄՆ-ի ռազմա-քաղաքական հովանու ներքո գոյատևող Թայվան կղզու շուրջ ծագած քաղաքական բախումը անխուսափելի չէր, որ վերածվեր Չինաստանի և ԱՄՆ-ի ռազմական բախման: Երբ ամերիկյան միջուկային ավիակիրները մոտեցան Թայվանի սահմանամերձ ջրերին, Չինաստանը վստահաբար ընդունեց ԱՄՆ-ի մարտաօդակները: Ունենալով բավականին մեծ սփյուռք, հատկապես Դարավարևելյան Ասիայի բազմաթիվ երկրներում, որտեղ չինացիների ծեղում կենտրոնացած է հսկայական կապիտալ (Սինգապուրը, օրինակ, բնակեցված է գերազանցապես չինացիներով,

Ինդոնեզիայում մոտավորապես 4-5 տոկոս կազմող չինացիների ձեռքում է կենտրոնացած այդ հսկա՝ 300 մլն-ից ավելի բնակչություն ունեցող երկրի ֆինանսական կապիտալի 75-80 տոկոսը և այլն, որը հիմնականում հոսում և շրջանառության մեջ է մտնում Չինաստանի տնտեսական համակարգում:

Համաշխարհային քաղաքականության մեջ իր դիրքերն ամրապնդելու նպատակով Չինաստանը ձգտում է միջպետական սերտ հարաբերություններ հաստատել այնպիսի հզոր երկրների հետ, որոնց չեն գոհացնում մասնավորապես ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական հավակնությունները: Այսպես, Իրաքի շուրջ ծագած վերջին ճգնաժամի ժամանակ ԱՄԿ-ի Անվտանգության խորհրդում Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ միասին Չինաստանը հետևողականորեն դեմ էր ԱՄՆ-ի կողմից Իրաքին միակողմանի հարվածներ հասցնելու թե՛ դիրքորոշմանը, թե՛ «տեխնոլոգիային», ինչը և ստիպեց նրան հրաժարվել իր մտադրությունից:

Եթե վերջին շրջանում Չինաստան-Ռուսաստան հարաբերությունները մերձեցման հուսալի միտումներ են ցույց տալիս (սահմանային վիճարկելի հարցերի իրավական կարգավորում, 3 մլրդ դոլար արժողությամբ ատոմակայանի կառուցման պայմանագրի կնքում և այլն), ապա նույնը չի կարելի ասել Չինաստան-ճապոնիա փոխհարաբերությունների մասին: Ասիա աշխարհամասում, հատկապես Հարավարևելյան Ասիայի երկրներում չինական և ճապոնական ֆինանսական կապիտալները պարբերաբար բախվում են միմյանց: Չէ՞ որ Ասիայում Չինաստանի աշխարհաքաղաքական շահերը հակասության մեջ են ճապոնիայի կողմից նույն տարածաշրջանում սեփական աշխարհաքաղաքական շահերի ու ֆինանսատնտեսական դիրքերի ամրապնդման փորձերի հետ: Հիշեցնենք, որ ճապոնիան Հարավարևելյան Ասիայի պետությունները համարում է իր ավանդական շուկան (երկրորդ աշխարհամարտից առաջ և պատերազմի ընթացքում այդ տարածաշրջանը հիմնականում ճապոնիայի ազդեցության ոլորտում էր գտնվում) և խանդով է վերաբերվում իր երբեմնի գաղութի՝ Չինաստանի՝ որպես օր օրի հզորացող պետության ինքնավստահ արտաքին քաղաքական քայլերին:

Առավել ևս, որ ճապոնիան Հարավարևելյան Ասիայի երկրների տնտեսությունները զարգացնելու, ազգային ֆինանսական միավորները համեմատաբար կայուն պահելու և ճգնաժամային ճգնումներից ապահովագրելու նպատակով ցանկանում է հիմնել Հարավարևելյան ասիական բանկ (ՀԱԱԲ), որի կանոնադրական կապիտալի գրեթե կեսը՝ 50 մլրդ դոլար, հատկացնելու էր Ծագող արևի երկիրը: Ըստ ճապոնիայի մտահղացման, նման բանկը պետք է փոխարինի ԱՄԳ-ին և ՀԲ-ին:

Քանի որ Ռուսաստանը եվրոպայի մաս կազմող պետություն է, իսկ ճապոնիան ոչ միայն նրան դաշնակից չի կարող դառնալ վերը նշված մի քանի պատճառներով, այլև ԱՄՆ-ի մերձավոր բարեկամն ու ռազմա-

վարական գործընկերն է (չնայած նրանց միջև ընթացող առևտրական բնույթի սուր հակասություններին), հետևաբար Չինաստանն ուրիշ ելք չունի, քան հենվել սեփական մարդկային չափազանց հարուստ ռեսուրսների (1 մլրդ 150 մլն մարդ), ազգային մշակույթի ու արդեն բնականոն աշխատող ռազմա-քաղաքական և ֆինանսատնտեսական զարգացման հզոր ներուժ ունեցող մեխանիզմների վրա և դուրս գալ ինքնուրույն աշխարհաքաղաքական բևեռ դառնալու մայրուղի: Չին ժողովուրդը չավ է զիտակցում, որ հզորներին են միանում թույլ զարգացած երկրները և ոչ թե՛ հակառակը: Եվ, միաժամանակ, հզոր երկրի հետ հաշվի են մատում մյուս հզոր պետությունները: Քանի որ քաղաքականությունը հնարավորի արվեստ է և այդ ոլորտում ամեն ինչ և ցանկացած մի տարբերակ կարող են երբևիցե իրականություն դառնալ, ուստի չպետք է քացառել, որ ոչ շատ հեռու ապագայում և համաշխարհային քաղաքականության մեջ առանձին պայմանների նպաստավոր վերադասավորման պարագայում կարող է Չինաստան-ճապոնիա միացյալ Կորեա էթնիկ ընդհանրությունների վրա ձևավորվել աշխարհաքաղաքական նոր բևեռ...

Իսկ ինչ վերաբերում է աշխարհի մյուս տարածաշրջանների՝ Մերձավոր և Միջին Արևելքի, Անդրկովկասի, Միջին և Կենտրոնական Ասիայի երկրներին, ապա յուրաքանչյուրը, ղեկավարվելով սեփական ռազմավարական շահերով կփորձի հարել աշխարհաքաղաքական այս կամ այն բևեռին: Հակառակ պարագայում նրանց մեջ կարող են լինել կամ գտնվել երկրներ, որոնք կփորձեն մեծագույն ճիգերի գնով ձեռք բերել «տարածաշրջանային գերտերության» կարգավիճակ, բայց կրկին միանալով աշխարհաքաղաքական կամ էլ ռազմա-քաղաքական որևէ դաշինքի:

«ԵՐԿԻՐ» թերթ,
23 մայիս, 1998 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՎՂԱԹՎԱՆ ԱՊԱԳՎՆ

Իսկական շոյալություն
ապագայի հանդեպ այն է, որ
ամեն ինչ նվիրես ներկային:

Ալբեր Թամյու

Համաշխարհային մասշտաբով կոմունիստական գաղափարախոսության պարտությունը սկիզբ դրեց պատմության մի փուլի, որի նախաձեռնված ուղենիշները կամ նույնիսկ մոտավոր քաղաքական հաստատումները դեռևս մինչև վերջ հստակեցված չեն: Պատահական չէ, որ ներկայումս համաշխարհային քաղաքագիտական միտքը հենց այս ուղղությամբ գտնվում է տենդագին որոնումների մեջ: Ընդ որում, այդ որոնումների հիմնական նպատակն է՝ ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողությունների ներքին տրամաբանական զարգացումների լայն սպեկտրում Արևմուտքի և Արևելքի, Գյուսիսի և Հարավի միջև առկա հավանարտությունների լուծման համար փորձել գտնել այնպիսի մի տարբերակ, որը, թեև ուզ մասամբ, թավարարի բոլոր կողմերին: Իրավիճակը առավել բան խնդրահարույց է մասնավորապես ետխորհրդային ամբողջ տարածքում: Բանն այն է, որ քաղաքական անկայություն ձեռք բերած հանրապետությունների համար ընդհանրական է ինքնահաստատման ուղղված գաղափարախոսական, քաղաքական, տնտեսական և հոգևոր մշակութային բնագավառներում կատարվող համալիր քայլերը: Իսկ, ինչպես հայտնի է, ինքնահաստատման բարդ ճանապարհին անցնելիս հատկապես քաղաքական և տնտեսական բնույթի լուրջ սխալները կամ վրիպումները կարող են նաև ճակատագրական լինել այս կամ այն ազգի համար: Անշուշտ, ամբողջատիպական հասարակարգից անցումը ժողովրդավարական կարգերի կառուցման գործընթացներին շատ բարդ է, իսկ օրյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները՝ ակնհայտ: Անցումային փուլում գտնվող երկրների (այդ թվում և Հայաստանի) իշխանություններից յուրաքանչյուրը յուրովի է գիտակցում, որ կայուն, ժողովրդավարական արժեքների վրա հասարակարգ կառուցելը տասնամյակների խնդիր է: Սակայն թանն այն է, որ բոլոր նորանկախ երկրները չեն, որ կարող են իրենց մեծ շոյալություն թույլ տալ՝ անցումային փուլ կոչվածի ժամանակաշրջանը երկարաժեշտ ըստ կառավարողների հայեցողության: Օրինակ, Հայաստանն այն երկիրն է, որն ուղղակիորեն գտնվում է պատմական, աշխարհագրական և քաղաքական օրյեկտիվ հարկադրանքների հետևողական ճնշման ներքո և բոլոր առումներով իրավունք չունի «ճեմելու» սկզբունք որդեգրել անկախ պետականություն կառուցելու իրեն տրված ժամանակահատվածում: Առավել ևս, որ արդի դարաշրջանի ամենաազդեցիկ միտումի՝ քաղաքական և տնտեսական բնույթի անմախաղեպ ինտեգրացիոն գոր-

ծընթացների պարագայում, հզոր ու զարգացած անկախ պետության կայացման համար ոչ միայն բավարար չեն ներքին գործոնները, այլև արտաքին գործոնները կարող են վճռորոշ դեր խաղալ: Ուստի, հաշվի առնելով, մասնավորապես, վերջին տարիներին տեղի ունեցող աշխարհաքաղաքական մեծածավալ փոփոխությունները և վերջիններիս լուրջ ներգործությունը Հայաստանի ներքին քաղաքական և տնտեսական կյանքի, ինչպես նաև Արցախի շուրջ ծավալվող իրադարձությունների վրա, կարելի է ենթադրել, որ մեր երկրի աշխարհաքաղաքական ապագան կախված է ներքին և արտաքին բազմաբնույթ գործոնների արդյունավետ համադրման և դրանից նպատակային ձևով օգտվելու ազգային քաղաքական ուժերի կարողություններից և ազգի պատրաստակամությունից:

Որ իսՅՄՖ փուլումից հետո համաշխարհային քաղաքականության զարգացման տրամաբանության մեջ արմատական-որակական ոչ մի լուրջ փոփոխություն տեղի չունեցավ, կարծում են լրացուցիչ փաստարկներով հիմնավորելու կամ ապացուցելու անհրաժեշտությունը չկա: Նկատի ունենք այն հանգամանքը, որ «չարիքի կայսրության» կործանումից հետո քաղաքականության բարոյականացման նկատմամբ հատկապես փոքրաթիվ ժողովուրդների ակնկալիքները չարդարացան: Օրինակ, մեր ժողովուրդին ժամանակին թվում էր, թե արցախյան հարցի միջազգայնացումը թերևս նպաստի նրա պատմական արդարության վերականգնմանը (գործաչույսն կոմունիստական իշխանությունների տխրահռչակ «Օղակ» և այլ հայտայաց գործողություններով Արցախի հարցը «լուծելու» փորձերից խորապես հիասթափվելուց հետո): Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները (արցախյան հարցին վերաբերող ՄԱԿ բանաձևերը և այլն), մասնավորապես Լիսաբոնի գազաթաժողովում Հայաստանի դիվանագիտական մեկուսացումը և երեք հայտնի սկզբունքների գործադրման ուղղությամբ ներկայիս տարվող բանակցությունները ևս ապացուցում են, որ մեր ժողովուրդը պետք է մեկընդմիջտ ձեռքագատվի պատրանքներից:

Նույնիսկ երրորդ հազարամյակի նախաշեմին բարոյականությունը շարունակում է մնալ մեծն քաղաքականության աղախինը: Այլ կերպ ասած՝ պետությունների, հատկապես զարգացած երկրների աշխարհաքաղաքական շահերի պաշտպանության և ազդեցության նոր ուղուները ձեռք բերելու միջոցները և ձևերը առայժմ գտնվում են մարդասիրության, բարոյականության ըմբռնումներից դուրս:

Արդի փուլում համաշխարհային քաղաքագիտության հետաքրքրությունների կիզակետում է աշխարհաքաղաքական երկրորդ բևեռի բացակայության փաստին հաջորդած միջազգային հարաբերությունների գործառնման, «նոր աշխարհակարգի» սկզբունքների կատարելագործման և դրանցում ընթացող էական տեղաշարժերը գիտականորեն ուսումնասիրելու խնդիրը:

Ենթադրվում է, որ արտակուսանք չի կարող հարուցել այն հանգամանքի գոյությունը, որ քաղաքական նոր մշակույթի և նոր ար-

ծեքների ձևավորման գործընթացները իրենց շոշափելի հետքերն են բողոքում հատկապես փոքր պետությունների արտաքին քաղաքականության վրա: Թերևս այլ կերպ չի եղել չէր կարող, քանզի համաշխարհային մասշտաբներով պետությունների, դաշինքների և ստեղծվող տարածաշրջանային միությունների միջև աննախադեպ ծավալով և ակտիվությամբ զարգացող քաղաքական և տնտեսական ինտեգրացիան դարձել է լուրջ գործոն նոր հասարակական հարաբերությունների, նորացված աշխարհայացքի, քարոյական նոր պատկերացումների համակարգի ձևավորման համար: Միջազգային հարաբերությունների նորացվող համակարգի կենսունակության դիմամիկան ապահովելու նպատակին ուղղված փորձերը առավել հիվանդագին ներգործություն են ունենում առանձնապես այն երկրների ներքաղաքական և ներտնտեսական իրավիճակների վրա, որոնց նոր-նոր են սկսել կառուցել անկախ պետականության հիմքերը և նոր են ծանոթանում դիվանագիտության բարդ ու նուրբ խաղերի արվեստին:

Ինչպես հայտնի է, Հայաստանը տասնամյակներ շարունակ գտնվել է աշխարհաքաղաքական երկու բևեռներից մեկի՝ ԽՍՀՄ (ասել է թե՛ Ռուսաստանի), ազդեցության ոլորտում: Սակայն ԽՍՀՄ կործանումից հետո մեր տարածաշրջանը, ըստ էության, դարձել է կռվախնձոր: Մի կողմից՝ Ռուսաստանն է, որ վերջին շրջանում (առայժմ անհաջող) փորձեր է անում վերադառնալ «Մոկոկոկոկո» նպատակ ունենալով վերականգնել կորսված դիրքերն այս տարածաշրջանում, սակայն զբաղված է իր երկրի ներսում ներքաղաքական և ներտնտեսական բարդ խնդիրների լուծման գործերով, ուստի, դեռ վաղ է վերջնական արդյունքների մասին խոսելու: Մյուս կողմից՝ ԱՄՆ գլխավորած Արևմուտքի քաղաքական, տնտեսական, ֆինանսական և այլ բնույթի հետաքրքրությունները ընդլայնվում ու ուժեղանում են այս տարածաշրջանում, որոնց հետևողական զարգացումները կարող են աստիճանաբար հեռանկարում փոխել իրերի վիճակը և՛ Հայաստանում, և՛ Վրաստանում, և՛ Ադրբեջանում: Գաղտնիք չէ, որ ժամանակի ընթացքում անընդհատ մեծանալու է այս երեք երկրների ֆինանսատնտեսական կախվածությունը միջազգային ֆինանսական կազմակերպություններից և Արևմտյան երկրներից, որոնք և հանդիսանում են նրանց հիմնական վարկավորողներն ու «դոնոր» պետությունները: Մշտապես աճի միտում ցույց տվող վարկերը, հասկանալի է, վաղը որպես պարտք՝ ծանրանալու են այդ պարտքերը վերադարձնող հիմնական հարկատուի՝ ժողովրդի մի քանի սերունդների ուսերին: Ահա հենց այստեղ է, որ Հայաստանը պիտի ցուցաբերի քաղաքական ու դիվանագիտական շրջափառություն ու ստեղծված իրավիճակից համեմատաբար կարճ ժամանակամիջոցում դուրս գալու նպատակով ոչ ստանդարտ քայլերի դիմի:

“ՄՈՒՈՐԱԿ” թերթ,
27 մայիս, 1997թ.

1. ՆԵՐՔԻՆ ԶՎՈՒՔՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՎԱՈՒՄ

Հայաստանի կրկին քաղաքական անկախություն ձեռք բերելը վիթխարի իրադարձություն եղավ հայ ժողովրդի վերջին հազարամյա պատմության մեջ: Ըստ էության, այսպիսի մեծագույն իրադարձությանը համարժեք տեսական համակողմանի գնահատական չտրվեց ոչ իշխանությունների և ոչ էլ քաղաքական որևէ այլ ուժի կողմից:

Ունենալով խիստ յուրօրինակ և նաև ողբերգական ճակատագիր, 1918-20թթ. կարճ գոյատևած Հայաստանի Առաջին հանրապետությունից հետո, թերևս, կարիք կար շատ զգուշավոր և չափազանց լուրջ պատասխանատվությամբ վերաբերվելու անցյալի պատմությանը և քաղաքական կողմանի վերագնահատում կատարելու, որը, ցավոք, տեղի չունեցավ: Այլ կերպ ասած, անիրաժեշտություն կար և այժմ էլ կա նորովի իմաստավորելու մոտավորապես 30 հազար քվե տարածքի վրա ստեղծված հայոց անկախ պետականության ծնունդը և քաղաքագիտության պահանջներին համապատասխան՝ համակողմանիորեն մշակելու Հայաստանի աշխարհաքաղաքական ապագայի համադրույթը, որը կներառի նաև Հայ դատի քաղաքական փիլիսոփայության սկզբունքները: Այսինքն՝ այսպես կոչված, «իրադրային ռազմավարությամբ» ղեկավարվելով, դժվար թե մենք կարողանանք այնպիսի հզոր երկր կառուցել (հարակից էլ ունենալով արմատոր վերջի վերածված արցախյան հարցը՝ սպասվելիք դիվանագիտական և քաղաքական ճնշումների պայմաններում), որը երաշխավորված ապագա ունենա 21-րդ դարի քեկուզ առաջին տասնամյակում:

Անշուշտ, հարց կարող է առաջանալ՝ որո՞նք են այն հիմնահարցերը, որ կարող են շոշափել Հայաստանի աշխարհաքաղաքական ապագայի համադրույթի մշակման ընթացքում:

Բոլորովին հավանություն չունենալով ընդգրկելու շոշափվող հիմնահարցերի ամբողջ սպեկտրը (քանզի նման համադրույթ մշակելու համար, որպես կանոն, հարկավոր է համապատասխան տեղեկատվություն և շահագրգռված գիտատեսազտական կենտրոնների, ինստիտուտների ներգրավում և այլն), այդուհանդերձ, ստղծելիք հեղինակը կփորձի ներկայացնել մի քանի նկատառումներ խնդրո առարկայի վերաբերյալ.

1. Հայաստանի աշխարհաքաղաքական ապագայի համադրույթի հիմքում պետք է ընկած լինեն անկախ պետականության պահպանման, ամրապնդման և Հայ դատի քաղաքական փիլիսոփայության հիմունքները՝ Անկախ, Միացյալ և Ազատ Հայաստանի ստեղծումը համարելով ռազմավարական նպատակ:

2. Հայաստանի՝ որպես անկախ պետության գոյատևման ռազմավարական ծրագրի՝ ռազմաքաղաքական դեկտրինայի հիմնա-

դրույթները չպետք է հակասեն Հայաստանի աշխարհաքաղաքական ապագայի համադրույթի ոգուն:

3. Անկախ Հայաստանին պատմականորեն տրված բացառիկ հնարավորությունն առավելագույնս օգտագործելու բոլոր (քաղաքական, տնտեսական, հոգևոր-մշակութային և այլն) գործոնները պետք է արտացոլվեն Համադրույթում:

4. Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում օբյեկտիվորեն տրված ժամանակի գործոնի գերազնահատման քաղաքական անհրաժեշտության գիտակցումը պետք է համարվի ռազմավարական բնույթի հիմնախնդիրների լուծման կարևորագույն պայմաններից մեկը և այլն:

Թե ինչու հայրց անկախ պետականության նալը բոլոր առումներով իրավունք չունի անառագաստ (ասել է քե՛ առանց Հայաստանի աշխարհաքաղաքական ապագայի համադրույթի մշակման) մտնելու երրորդ հազարամյակի շենը, մեջքերենք ժողովրդավարական արժեքների պահպանման միջնաբերդը հանդիսացող աշխարհի միակ գերտերության՝ ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնի ելույթից մի հատված. «Որպեսզի ավելի լավ պատկերացնենք, քե վերջին չորս տարիներին ինչ է տեղի ունեցել, կբերեմ մի քանի քվեր: Իր ռազմավարական հզորությամբ Ռուսաստանն այսօր նույնիսկ Արևմտյան Եվրոպայի երկրներից ետ է մնում 5-10 տարով, դա դեռ այժմ: Մինչդեռ ՆԱՏՕ-ի և ԱՄՆ ռազմական հզորությունն աճել է 15 անգամ: Մենք գերազանցում ենք Ռուսաստանին ռազմական բոլոր ցուցանիշներով, ունենք երեք անգամ ավելի ատոմային սուզանավեր, երեսուն անգամ ավելի ավիակիրներ, ատոմային մարտազլիակներ... Ամերիկյան հրթիռները, ինչպես նախկինում, ուղղված են Ռուսաստանի վրա, քանզի ԱՄՆ և ՆԱՏՕ առաջնահերթ քշմամին Ռուսաստանն է: Ե՛վ միայն Ռուսաստանի՝ որպես պետության, քայքայումն ու վերջնական կործանումը կազատի մեզ այս քիվ առաջին թշնամուց: Եթե մենք կարողանանք դրան հասնել մոտ ժամանակներում, ապա կլուծենք արևմտյան քաղաքակրթության ամենակարևոր խնդիրը՝ արմատից կոչնչացնենք ԽՍՀՄ-ի, կոմունիզմի վերածնման ցանկացած հնարավորություն»: Իսկ քե ինչ է նշանակում Ռուսաստանի քայքայումն ու վերջնական կործանումը Հայաստանի և հայ ժողովրդի համար, կարծում եմ, որ մեկնաբանություններն ավելորդ են: Լրացուցիչ մեկնաբանությունները, քե որքան ավելորդ են, վկայում է և «Թայմ» պարբերականի 1992թ. հոկտեմբերի 19-ի համարից վերցված հետևյալ մեջքերումը. «Պահանջվում է պետություն, որն Արևմուտքը Մերձավոր Արևելքին կապող կամուրջ ծառայի... լինի Եվրոպայի և ԱՄՆ հավատարիմ դաշնակիցը: Նրա կրոնն ու մշակույթը կարող են իսլամական երկրների աշխարհիկ ժողովրդավարության օրինակ ծառայել: Շատ ցանկալի կլինի, եթե ծաղկուն շուկայական տնտեսություն ունենա և որդշ օգնություն ցույց տա աղքատ եղբայրներին: Խոստանում ենք այդ

պետությամը մոտակա մի քանի տարում տեղական գերտերության կարգավիճակ, իսկ հետագայում՝ հնարավոր ազդեցություն համայն աշխարհի անցուդարձի վրա... Այդպիսի պետություն փնտրելու կարիք չկա. Թուրքիան բավարարում է բոլոր պահանջները»:

Իսկ քե ո՞ր երկիրը ի գորու կլինի «տեղական գերտերության կարգավիճակ» ձեռք բերած կամ «համայն աշխարհի անցուդարձի վրա հնարավոր ազդեցություն» ունեցող Թուրքիային զսպաշապիկ հագցնել այս տարածաշրջանում, եթե ոչ հզոր Ռուսաստանը, նույնպես հասկանալի է և՛ հայ ազգի, և՛ Ռուսաստանի, և՛ Արևմուտքի՝ ի դեմս ԱՄՆ-ի և հենց իր՝ Թուրքիայի համար:

«Նա, ով չի հիշում իր անցյալը, դատապարտված է այն նորից վերապրելու», ասում է Սանտայանան: Մեզ համար անառարկելի ճշմարտություն է, որ մեր ժողովուրդը չի ցանկանում մոռանալ դարասկզբին իր կրած ողբերգությունը...

"ՄՈՒՈՐԱԿ" թերթ,
30 մայիս, 1997թ.

2. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՒՄ

Որպեսզի աշխարհում և հատկապես տարածաշրջանում Հայաստանը ձեռք բերի քաղաքականապես կայուն կողմնորոշում ունեցող երկրի համարում և լուրջ ու վստահելի քաղաքական գործընկեր ներկայանա իր ռազմավարական դաշնակիցներին, հարկավոր է, որ իշխանությունները հստակություն մտցնեն իրականացվող արտաքին քաղաքականության մեջ:

Որո՞նք են այն խնդիրները, որոնց իշխանությունները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն:

1. Հարկավոր է ձերբազատվել Արցախը Հայաստանի արտաքին քաղաքականության համար «աքիլլեսյան գարշապար» դիտելու գայթակղությունից և թերաթմեքության քարղույթից: Գիշտ հակառակը, Արցախի հարցը պետք է ընդունել և զնահատել որպես պատմությունից ժառանգված պարզև՝ քաղաքականության բնագավառում լրացուցիչ և ծանրակշիռ քաղաքական շահաբաժին (դիվիդենտ) ձեռք բերելու համար:

2. Համեմատած իր երկու հարևաններին՝ Վրաստանին և Ադրբեջանին, Հայաստանը Ռուսաստանի հետ հարաբերություններում ունի դիվանագիտորեն մասնրելու լայն դաշտ, որից իշխանությունները

որ Հայաստանի ռազմավարական դերի կտրուկ բարձրանալու հարցում կասկածներ չեն կարող լինել:

3. Լինելով Ռուսաստան - Հայաստան - Իրան աշխարհաքաղաքական նոր ձևավորվող առանցքի կապող հիմնական օղակը, ժամանակն է, որ մեր երկիրը թոթափել կարողանա Արևմուտքի կողմից գործադրվելիք հնարավոր ճնշումների վախը և մեր ժողովրդի ապագան երաշխավորող այդ կարևորագույն առանցքի ստեղծման ուղղությամբ ակտիվ դիվանագիտական աշխատանքներ տանի: Այս ուղղությամբ Հայաստանի դիվանագիտության աշխուժացումը օրյեկտիվորեն հնարավորություն կընձեռի աստիճանաբար թուլացնել մեր երկրի հետզհետե աճող կախվածությունը Արևմուտքից և կստեղծի ամուր պատմեշ՝ պանթուրքիզմի հավանական վտանգը չեզոքացնելու համար: Չէ՞ որ հենց այս ճանապարհով երկու հզոր հակաթուրք երկրները՝ Ռուսաստանը և Իրանը ոչ մի պարագայում թույլ չեն տա Թուրքիայի ազդեցության տարածումը Անդրկովկասյան տարածաշրջանում:

4. Անշուշտ, ողջունելի է վերջին շրջանում նկատվող Հայաստանի դիվանագիտական աշխույժ շփումները Հունաստանի, Լիբանանի, Սիրիայի և արաբական մյուս երկրների հետ: Անհրաժեշտ է նոր թափ հաղողել թուր հակաթուրք դիրքորոշում ունեցող երկրների հետ քաղաքական, դիվանագիտական տնտեսական և մշակութային շփումներ:

հետևանքով Թուրքիան քաղաքական առումով, ինչպես ասում են, խփում է մի քանի ռազմավարական նշանակություն ունեցող նպատակով: ա) թուրքական կողմը հասնում է այն բանին, որ համաշխարհային հանրությունը տեսնում է, որ թուրքերը «մեծահոգաբար մոռացության են մատնում հայերի կողմից կատարված թուրք ժողովրդի ցեղասպանությունը և հաշտության ձեռք մեկնում նախկին թշնամու՜ հային», բ) քաղաքական անգնահատելի շահաբաժին է (դիվիդենտ) վաստակում՝ 1915թ. հայոց Մեծ եղեռնի հարցը միջազգային տարբեր մակարդակներում (ՄԱԿ և այլն) հավանական քննարկումների օրակարգից վերջնականապես հանելու համար, ինչպես նաև ձեռք է բերում «պատմական թյուրիմացությունը վեհանձնաբար շտկողի» մեծ համբավ, գ) ունենալով հայաստանյան միջանցքը Միջին Ասիայի իր ցեղակից ժողովուրդների հետ տնտեսական կապեր հաստատելու նպատակով, նա զարգացնելու է տասնյակ կամ էլ հարյուր միլիոնավոր դոլլարների հասնող առևտուր, որի հետևանքով Արևմտյան Հայաստանը դարձնելու է տնտեսապես ծաղկուն երկրամաս, դ) կյանքի համար բնականորեն պայմաններ ստեղծելով, թուրքական իշխանությունները հենց այս կերպ՝ հայերի անմիջական օգնությամբ, կկասեցնեն Թուրքիայի արևելյան մասում գտնվող արտադրության արտադարձը դեպի արևմտյան գերխիտ բնակության վայրերը և այլն: Նաև հենց այս ճանապարհով Արևմտյան Հայաստանի տարածքը դարձնելով 15-20 մլն բնակչություն ունեցող արդյունաբերական առումով զարգացած բնակավայր, մենք վերջնականապես կզրկվենք մեր երկիրը ետ ստանալու հնարավորությունից: Ահա թե ինչու նրանք, ովքեր համոզված են, որ կարելի է առևտրատնտեսական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ՝ առանց քաղաքականությունից «դիպչելու», խոր մոլորության մեջ են:

6. Իհարկե, շնորհակալ լինելով Հայաստանին արևմտյան բազմաբնույթ և բազմամիլիոն դոլլարների օգնություն ցուցաբերելու համար, միաժամանակ հարկ է արձանագրել, որ այդ օգնությունը իր խորքում ունեի և այսօր էլ ունի հեռահար քաղաքական նպատակ, այն է՝ նվազագույնի հասցնել Հայաստանի Հանրապետության վրա Ռուսաստանի ռազմաքաղաքական ազդեցությունը: Այլ կերպ, փոխել տալ Հայաստանի, հայ ժողովրդի երեք հարյուրամյա քաղաքական կողմնորոշումը առ Ռուսաստան: Կասկածից վեր է, որ մեր ժողովրդի դարավոր երազանքն է եղել ապրել քաղաքականապես անկախ պետության մեջ՝ պետականության բոլոր ատրիբուտներով հանդերձ: Եվ այսօր, անկախ հայտնական հարաբերությունների պատմության մեջ առկա մակընթացություններից ու տեղատվություններից, Ռուսաստանը, մեր օգնությամբ, մեր միջոցով կարող է երաշխավորել Հայաստանի՝ որպես անկախ պետության, գոյատևման հեռանկարը որպես ռազմավարական դաշնակցի: Իսկ Թուրքիան, իր հերթին, եղել և մնում է Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ ռազմավարական դաշնակիցը, որի արտաքին քաղաքական

հիմնական ֆունկցիան է՝ փորձել հնարավոր բոլոր միջոցներով հակակշռել Ռուսաստանին Անդրկովկասի, Մերձավոր Արևելքի և Միջին Ասիայի տարածաշրջանային ռազմաքաղաքական շահերի բախման պարագայում: Դենց աշխարհաքաղաքական հակասությունների համատեքստում է, որ Հայաստանի՝ որպես անկախ պետության, ինչպես նաև համայն հայության ռազմավարական շահերը չեն հատվում Արևմուտքի ռազմավարական շահերի հետ:

"ՍՈՒՈՐՄԿ" թերթ,
28 մայիս, 1997թ.

ՍԵՎՃՈՒՎՅԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԹԱՂԵԼ
ՄԻԱՑՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԶԸ

ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին գաղութ-հանրապետությունների կենսագործունեությունն ապահովող այն բազմաթիվ կապերն ու մեխանիզմները, որոնք ղեկավարվում էին մի ընդհանուր կենտրոնի կողմից, հիմնովին խախտվեցին կամ վերացվեցին: Ըստ էության, գրեթե լիովին խախտվեցին տասնամյակների ընթացքում կայսրության բնականոն կյանքն ապահովող և մասի ու ամբողջի փոխհարաբերությամբ պայմանավորված հավասարակշռությունը: ԵՎ, քանի որ թե՛ այդ հանրապետությունները՝ առանձին-առանձին վերցրած (մասի) և թե՛ կայսրության (ամբողջի) միջև գտնվող ներքին հարաբերակցական կապերը նախկին ձևերով գոյություն չունեն, անկասկած էրկրները ստիպված են, ինչպես ասում են, իրենց գլխի ճաղ տեսնել՝ ով ինչպես կարող է:

Ուշի-ուշով հետևելով նախկին ԽՍՀՄ տարածքում տեղի ունեցող քաղաքական-տնտեսական՝ իրենց բնույթով բազմաստիճան և բազմաբնույթ դեպքերի ու իրադարձությունների ժամանակագրությանն ու տրամաբանական ընթացքին, Ռուսաստանի վաղեմի հակառակորդը՝ Թուրքիան, իր անդրավկիանոսյան և արևմտաեվրոպական հզոր հովանավորների խորհրդով, պիտի որ այս տարածաշրջանում առավել գործուն դեր ստանձներ: Եվ ահա Թուրքիայի համար այդ բարեպատեհ առիթը ներկայացավ. այդ «քաղաքակիրթ» երկրի նախածնունդային այս տարածաշրջանում ստեղծվում է Սևծովյան Տնտեսական Համագործակցություն (ՄՀՀ), որի նպատակը հարևան պետությունների միջև իբրև թե առևտրատնտեսական ամենատարբեր բնույթի (նաև՝ մշակութային) կապերի ու հարաբերությունների զարգացումն է:

Իսկ որո՞նք են ռազմաքաղաքական և տնտեսական այն հիմնական պատճառները, որոնց «երկունքով» էլ ծնվեց այդ, այսպես կոչված, Սևծովյան Տնտեսական Համագործակցություն՝ ստեղծելու հենց թուրքական նախածնունդով:

Առաջին: Վիթխարի կայսրության փլուզումից հետո էլ իր մտավոր ներուժով և ռազմատնտեսական, նյութական և մարդկային պաշարներով Ռուսաստանը, ԱՄՆ-ի հետ միասին, դեռևս մնում է աշխարհի գեր-հզոր տերություններից մեկը, չնայած ապրում է տնտեսական մեծ ղժվարություններ: Օգտվելով իր ամենահզոր հակառակորդի՝ Ռուսաստանի, «ծնկաչոք», բայց չտապալված և քաղաքական ու տնտեսական պարբերական ցնցումների մեջ հայտնված թուլություններից, ԱՄՆ-ը փորձում է անել հնարավոր ամեն բան, որ հանկարծ «հյուսիսային արջ»-ը չվերակենդանանա նախկին հարձակողականությամբ ու հզորությամբ: Այլ կերպ, նա աչ ձեռքով պջակցում է այդ երկրում

հիվանդագին ընթացող տնտեսական բարեփոխումներին, ձախ ձեռքով օգտագործում է դիվանագիտական ամենանուրբ ձևերն ու քաղաքական միջոցները նրան՝ նախկինում ունեցած ազդեցության ոլորտներից (մասնավորապես՝ Կովկասից ու Միջին Ասիայից և Հարավսլավիայից) դուրս մղելու համար:

Երկրորդ: Ռուսաստանի հանդեպ իր ունեցած գաղտնի մտահոգությունները ԱՄՆ-ը կյանքի է կոչում միջնորդավորված բազմաթիվ միջոցներով. հանրային, քաղաքական կազմակերպությունների, ինչպես նաև Դաշնակցային Ռուսաստանի հարևան երկրների աշխարհագրական դիրքերն օգտագործելու ճանապարհներով:

Հաշվի առնելով Թուրքիայի աշխարհագրական (Կովկասն ու Անդրկովկասը), ինչպես նաև էքոնիկական, լեզվական, ծագումնաբանական, կրոնական և այլ առանձնա-հատկություններն ու ընդհանրությունները Միջին Ասիայում (Դազախստան, Դրոզդստան, Թուրքմենստան, Ուզբեկստան) ապրող ժողովուրդների հետ, ԱՄՆ-ը իր ռազմավարական շահերը առավել «անվտանգ» դարձնելու նպատակով «շրջանառության մեջ» է դրել հատկապես թուրքական գործոնը:

Երրորդ: Իրականում պատրվակ դարձնելով Իրանի կողմից դեպի մուսուլմանական աշխարհի իսլամական ֆունդամենտալիզմի գաղափարների «արտահանման» հնարավորությունը, որը, ըստ արևմտյան որոշ դիտորդների, ռեալ սպառնալիք է ամբողջ քաղաքակրթության համար, և նկատի առնելով Թուրքիայում իսլամի և արևմտյան տիպի ժողովրդավարական կարգերի «հազվագյուտ» զուգորդման ու համադրման իրողությունը, ԱՄՆ-ը Թուրքիային փորձում է դարձնել իսլամական ֆունդամենտալիզմի գաղափարախոսության տարածումը կասեցնող միջնաբերդ...

Չորրորդ: Քանի որ ժամանակները որոշ չափով փոխվել են, այսինքն՝ քացահայտ բռնազավթումները և ժողովուրդների գաղութացման ձևերն ու եղանակները ավելի են կատարելագործվել ու նրբացել, այսինքն՝ ռազմական ճանապարհով ազդեցության նոր ոլորտներ ձեռք բերելը «չի ընդունվում քաղաքակիրթ» երկրների կողմից, հետևաբար, նույն նպատակն իրականացվում է «ամենամեղ»՝ տնտեսական, դիվանագիտական և քաղաքական ճանապարհներով: Ցանկացած բնույթի հարց լուծվում է շատ պարզ մեխանիզմով. ծրագրերը մշակվում են աշխարհի հզոր ուժերի կողմից, իսկ դրանց իրականացումը, ինչպես ասում են, տեխնիկայի խնդիր է: Այսինքն, թե ինչպիսի՞ քաղաքական, դիվանագիտական և տնտեսական, ուղիներով կիրառորդվի այս կամ այն ծրագիրը, վերջին հաշվով, այնքան էլ կարևոր չէ: Չէ՞ որ գլխավորը ակնկալվող նոր ազդեցության ոլորտներ ձեռք բերելն է: Ինչպես ցույց են տալիս հանրային հարաբերությունների զարգացման տրամաբանությունը և երկրորդ աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային փորձը, թերևս ազդեցության նոր ոլորտներ ձեռք բերելու

ամենահարմար եղանակը տնտեսական բռնազավթումներն են, որոնք իրագործվում են աստիճանաբար, ինչպես վարկեր տրամադրելու, այնպես էլ նոր տնտեսական միություններ ստեղծելու ուղիներով:

Գնեց նման մի «ամենող» նպատակ է հետապնդում Թուրքիայի նախաձեռնությամբ արդեն ստեղծված Անժուլյան Տնտեսական Համագործակցությունը (ԱՏՀ), որի մեջ մտնում են Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ռուսաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Ռումինիան, Ալբանիան, Բուլղարիան, Հունաստանը և Թուրքիան:

Հինգերորդ: Գնեց սկզբից Ըշենք, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի համար առարկայորեն առաջացան այնպիսի նախադրյալներ, որոնք հնարավորություններ ընձեռեցին, որ նա իր աշխարհագրական նպաստավոր դիրքը և երկրի քաղաքական համակարգը (ժողովրդավարական) և տնտեսական հարաբերությունների բնույթը (ազատ շուկայական) կարողանա հնտորեն ՁՈՒԳՈՐԴԵԼ ՀԱՍԱԹՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ (պանթուրքիզմի) գաղափարախոսության իրագործման հետ: Իր քիկունքում ունենալով ԱՄՆ –ի բացահայտ հովանավորությունը, խորապես հասկանալով ու գնահատելով առարկայական պայմանների՝ հոգուտ սեփական ռազմավարական նպատակների ոչ հեռու ապագայում իրագործելու ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՀԻ հրամայականը, Թուրքիան օգտագործում է քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, կրոնական և մշակութային հնարավոր բոլոր միջոցները՝ միջազգային հարաբերությունների համակարգում առավելագույն քարենպաստ կարգավիճակ ձեռք բերելու համար: Միաժամանակ, հնտորեն խուսաճանակության գաղափարների տարածման հնարավորության մեծացման ուղիղ համեմատական կախվածության խնդրի քաղաքական վիթխարի նշանակությունը: Եվ ահա, պատմական այս հարմար պահի օգտագործման թերևս լավագույն ձևը տնտեսական միության ստեղծումն է, որի արդյունավետ գործառնան դեպքում Թուրքիան կլուծի ռազմավարական բնույթի մի շարք հարցեր, որով և, մեր խորին համոզմամբ, կթաղի Սևրի դաշնագրով նախատեսված Միացյալ Հայաստանի կազմավորման ու հայկական դիվանագիտական մտքի կողմից ձեռնարկվելիք զրեթե բոլոր քայլերը:

Վեցերորդ: Լիովին ակնհայտ է, որ ԱՏՀ-ի կազմի մեջ ներքաշելով տնտեսապես հյուծված, իսկ քաղաքականապես դեռևս չկայացած Հայաստանի Հանրապետությանը, Թուրքիան խորամանկորեն, առաջին հերթին, հետապնդում է քաղաքական նպատակներ:

Փետրվարի 25-26-ը Ստամբուլում կայացած ԱՏՀ-ի կազմի մեջ մտնող երկրների խորհրդարանների ղեկավարների խորհրդակցությունից վերադառնալուց հետո, ՀՀ պատվիրակության ղեկավար, ԳԻՆ նախագահ Բարկեն Արարքյանը լրագրողների հետ հանդիպման ժա-

մանակ շեշտեց, որ ստեղծվող այս կառույցը սևծովյան երկրների միջև ՁՈՒՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՒՆԴԱՍԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՊԱՍԿԱՎ ՈՒՆԻ: Դե ինչ, մնում է զարմանալ, թե ինչպես մի ամբողջ պետության օրենսդիր մարմնի ղեկավարը կարող է չմանալ, որ քաղաքականությունն ու տնտեսությունը ՓՈՒՆԴԱՍԱԿԱՆՎՈՐՈՒՄ են ՄԻՄՅԱՆՑ, և միջպետական հարաբերություններում պարզապես անհնար է, որ «զուտ տնտեսական փոխամազործակցությունը»-ը ՁՈՒՆԵՆԱԿ ՔԱՐԱՔԱԿԱՆ ՇԱՐԺԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԵՆԹԱՏԵՑՄԱՆ: Կարծում ենք, որ «մեկայի» Հայաստանի իշխանություններին, մասնավորապես ԳԻՆ նախագահին, պիտի որ հետաքրքրեր 1992թ. Բոսֆորի միայն հայտարարությանը միացած, Թուրքիային երկու «բարեկամ» երկրների՝ Հունաստանի և Բուլղարիայի, լրջամիտ ու խիստ զգուշավոր կեցվածքը այդ, այսպես կոչված, ԱՏՀ-ի նկատմամբ: Ի տարբերություն մեր իշխանությունների, Հունաստանի և Բուլղարիայի կառավարություններն ունեն պատմական հիշողություն և երբեք չեն մոռանում, թե ում հետ գործ ունեն: Մենք հակված ենք այն մտքին, որ Թուրքիան, մասնավորապես Հայաստանի համար, ՔԱՐԱՔԱԿԱՆ ԾՈՒՂԱԿ է նախապատրաստում... Համենայն-դեպս, Թուրքիայի չափից ավելի եռանդ ցուցաբերել ինչ-որ ԱՏՀ ստեղծելու ուղղությամբ հիմնավոր կասկածների տեղիք է տալիս:

Յոթերորդ: Երբ փորձում ենք համաշխարհային և հատկապես, տարածաշրջանի և ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված իրողությունների խորապատկերի վրա քննել Թուրքիայի նախաձեռնությամբ ու ամենագործուն մասնակցությամբ ստեղծվելիք ԱՏՀ-ի խնդիրը, նկատում ենք, որ այդ երկիրը հավանաբար «տնտեսական շախմատային» խաղը շահելու հեռահար հաշվարկներն արդեն արել է:

Օրինակ, ինչու՞ չենթադրեն, որ ԱՏՀ-ի գործառության արդյունավետ մեխանիզմը հնտորեն օգտագործելով, Թուրքիան լրացուցիչ միջոցներ ու հնարավորություններ կունենա Փոքր Ասիայի զարգացած արևմտյան հատվածի համեմատությամբ առավել հետամնաց, անասնապահական արտավայրերի վերածված արևելյան մասը (որը ընդգրկում է զրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանը) դարձնել խիստ զարգացած արդյունաբերական շրջան: Այսինքն՝ խիստ նոսր բնակչություն (հիմնականում՝ քրդերով բնակեցված) ունեցող, այսպես կոչված, Արևելյան Անատոլիայում կենսամակարդակի աստիճանական բարձրացմանը զուգընթաց, բնականաբար, կսկսվի մարդկանց հոսքը դեպի Արևմտյան Հայաստան: Սա էլ այն դեպքում, երբ, ըստ հավաստի աղբյուրների, մինչև այժմ դիտվել են հակառակ գործընթացները:

Եվ այս ամենի մեջ ողբերգազավեշտական այն է, որ, հասկանալի պատճառներով մինչև այժմ խուսաճ մնացած Արևմտյան Հայաստանը խիտ բնակեցված ու արդյունաբերական զարգացած շրջանի վերածելու «պատմական» գործընթացների մեջ իր «մեծ ներդրում»-ն է ունենում, ոչ ավել, ոչ պակաս, Արևելյան Հայաստանի Հանրապետու-

քյունը... Բանի որ Թուրքիան չի թաքցնում իր՝ գերտերություն դառնալու հավակնությունները, հետևաբար, չի բացառվում, որ ՄՏՀ կրչված տնտեսական միությունը այդ ճանապարհին նրա առաջին վճռական քայլն է՝ քողարկված հարևան երկրների հետ «փոխշահավետ» տնտեսական համագործակցության ծխածածկույթով...

"ԱՃԱՏԱՄԱՐՏ" թերթ,
10 մարտ, 1993թ.

ՎԱՏԱԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԳՐՎԵՐ

1998թ. մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության նախագահի արտահերթ ընտրությունները, ըստ էության, գաղափարախոսությունների, հայկական երկու անկախ պետությունների հետագա զոյատևումն ապահովող քաղաքական հայեցակարգերի ընտրություն էր:

Որպես չգրված կանոն, պատմության կողմից ընձեռած հնարավորություններից յուրաքանչյուր ժողովուրդ օգտվում է յուրովի: Այլ հարց է, թե տվյալ ժողովուրդը այդ հնարավորություններից ինչ չափով և ինչպես է օգտվում: Եթե ժողովուրդը հավատի հիմքի վրա օգտագործում է իր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցներն ու ձևերը, օրյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ամբողջ պաշարը կոնկրետ նպատակի իրականացման համար, ապա դա նշանակում է, որ այդ ժողովուրդն անվրեպ որսացել է պատմական պահի պատասխանատվությունը և գիտակցում է իր հնարավոր քայլերի կատարման անխուսափելիությունը: Ուստի, վստահաբար կարելի է հաստատագրել, որ մարտի 30-ին ընտրելով Ռոբերտ Քոչարյան քաղաքական գործչին՝ որպես Հայաստան երկրի նախագահ, մեր ժողովուրդը դրանով ապացուցեց, որ լիովին արժանի է հզոր պետություն ունենալու և վաստակել է բարեկեցիկ ապրելու իրավունքը:

Իսկ որո՞նք են այն առաջնահերթ հիմնահարցերը, որոնց դրական լուծումները կհաստատեն մարտի 30-ին ժողովրդի կատարած հիրավի պատմական ընտրության իրավացիությունը և, միաժամանակ, կցրեն սույն ընտրության ճշմարտացիությունը կասկածի տակ դնողների բոլոր մտավախությունները:

Հիմնահարց առաջին: Նոր նախագահին և նրան պաշտպանած քաղաքական ուժերին ժողովուրդը 20-րդ դարում տվեց իր վստահության վերջին քվեն այն համոզումով, որ նոր իշխանություններն իրեն հուսախաբ չեն անի: Անճնազորդ հավատազրկված ժողովուրդը փորձեց մեկ անգամ ևս ինքն իրեն հավատալ ու վստահել սեփական հավաքական բնազդին, կամքին ու գիտակցությանը: Եվ Աստված մի արասցե, եթե այս անգամ էլ, թեկուզ մասամբ, խաբվի ժողովուրդը, ապա Նոր իշխանությունների մեղքը շատ ավելի ծանր կլինի, քան նախորդ իշխանությունների գործած 7 տարիների բոլոր մեղքերը միասին վերցրած...

Ի՞ դեպ, նման տրամադրությունների արձանագրումը ժողովրդի տարրեր շերտերի հետ մեր անմիջական շփումների արդյունք է: Նոր իշխանությունների հանդեպ նման վերաբերմունքի հիմքում ընկած է

հետևյալ մոտեցումը. «Նախորդ իշխանությունների ներկայացուցիչները արեցին այն, ինչին ընդունակ էին, իսկ դու'ք՝ նոր իշխանություններ, ոչ մի առումով իրավունք չունեք լինել նրանց նման, քանզի մենք ձեզ ՉԱՎԱՏՈՒՄ ենք»:

Յիմնահարց երկրորդ: Նոր իշխանությունները երկրում պետք է կատարեն ՉԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ փոփոխություններ: Իսկ համակարգային բարեփոխումների այդ բարդ ու դժվարին գործընթացի ամենախոցելի տեղը ԿԱԴՐԱՅԻՆ փոփոխություններն են: Նախ, որպես օբյեկտիվ պայմանի և օրինաչափության հրամայական, հարկավոր է գիտակցել այն պարզ, բայց և իրական ճշմարտության գոյությունը, որ նոր իշխանությունները, որոնք գործելու են նոր գաղափարախոսության՝ ազգային-պետական գաղափարախոսության պահանջներին համապատասխան, չեն կարող արդեն բարոյագրված, կաշառակերության «գործընթացներում» կատարելագործման հասած հին կաղերի հետ նոր գաղափարներ իրագործել կյանքում: Չպետք է փորձել, միևնույն է, ոչինչ չի ստացվի: Իսկ եթե փորձ արվի որդեգրել այն գործելաոճը, թե իբր հին վարչական «զվարդիային» կարելի է ստիպել և վերահսկել «Շորովի» աշխատելու նպատակով, ապա նման մոտեցումը հիմնականում ԻՆՔՆԱՍՏՐԵՆՈՒԹՅՈՒՆ է: Այս պարագայում պարզապես կվարկարեկվեն և՛ նոր իշխանությունները, և՛ նոր գաղափարները, իսկ ժողովուրդն էլ ընդմիջտ երես կթեցի նաև նոր իշխանություններից: Չարկավոր է մանրակրկիտ ուսումնասիրել պատմության փորձը, դեռ չի եղել մի դեպք, երբ նոր գաղափարախոսությանը ծառայեն այդ նույն (ազգային) գաղափարախոսությունը ամբողջովին մերժող կամ էլ ամեն ինչի հետ հարմարվող հին կաղերը: Չետևաբար, չի կարող վիճարկման առարկա դառնալ այն իրողությունը, որ ՆՈՐ ԳԱՐԱՓՈՒՆԵՐԸ, ՆՈՐ ՍԿԶՐՈՒՋՆԵՐԸ, ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԸ պարտադիր իրագործվում են դրանցում համոզված ՆՈՐ ՄԱՐԿԱՆՑ միջոցով: Եթե նոր իշխանությունները չեն ցանկանում թույլ տալ իրենց նախորդների կոպիտ սխալները, ապա պետք է ղեկավարվեն քաղաքական նոր մեթոդաբանությամբ, իրականացնեն կադրային նոր քաղաքականություն: Ինչպես քաղաքագիտության մեջ է ընդունված ասել, նոր քաղաքականությունը ենթադրում է՝ ղեկավարվել արժեքային նոր չափումներով, նոր չափանիշներով:

Կադրային նոր քաղաքականությանը առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնեն նաև ՉՉ նախագահ Ռոբերտ Քոչարյանին ընտրապայքարի առաջին և երկրորդ փուլերում պաշտպանած քաղաքական ուժերը: Կառավարությունը և իշխանության մյուս օղակները բացառապես արհեստավարժ և բարոյական նկարագիր ունեցող մարդկանցով ձևավորելու քաղաքական մոտեցումը, անկասկած, ճշմարտացի է: Այդ երկու հատկանիշներին մենք ավելացնում ենք կառավարման չափազանց բարդ ու նուրբ արվեստին որոշ չափով ծանոթ լինելու համաձայնքը, որը ոչ պակաս կարևոր է:

...ով՝ ով՝ բայց ՉՅ Դաշնակցությունը առաջին հերթին քաղաքական, պատմական և բարոյական առումներով իրավունք չունի վրիպելու հատկապես սեփական կաղերի ընտրության հարցում՝ իր աչքի առջև ունենալով մեր ժողովրդի գիտակցության և հիշողության մեջ կուսակցության վերաբերյալ անկա հեղինակությունը լրջորեն խաթելու և վտանգելու ռեալ հնարավորությունը:

ՉԼ՝ որ Դաշնակցությունը 21-րդ դարում դեռևս շատ անելիքներ ունի... էլ չենք խոսում այն իրողության մասին, որ Ռոբերտ Քոչարյանի ընտրությամբ ազգային գաղափարախոսությունը դեռևս ամբողջական հաղթանակ չի արձանագրի, քանի դեռ մոտ ապագայում արհեստավարժ Ազգային ժողովում ՉՉ նախագահին աջակցող քաղաքական ուժերը մեծամասնություն չեն կազմել:

Չիմնահարց երրորդ: Կարծում ենք, մեզ հետ կիսամաձայնի ընթերցողը, որ նոր իշխանությունների նկատմամբ ցուցաբերվող հավատի դրսևորումն է ժողովրդի ակնկալիքները նրանցից, հատկապես՝ ՉՉ նորընտիր նախագահից: Այդ ակնկալիքների դրսևորումը կրում է բացասական մի նրբերանգ. ժողովուրդը անհամբեր է դրական փոփոխությունների նկատմամբ: Եվ դա բնական ու հասկանալի է: Միաժամանակ, ժողովուրդը հասկանում է, որ նախորդ յոթ տարիներին գործած սխալների շտկումը մեկ ժամվա կամ էլ մեկ օրվա գործ չէ: Չխավորն այստեղ խոստացված լուրջ ու դրական բարեփոխումների ակնհայտությունն է, որի դեպքում ժողովուրդը իրեն բարոյա-հոգեբանական առումով հիմնականում բավարարված կզգա: Այլ կերպ՝ կարևորը փոփոխությունների գործընթացն սկսելն է: Ինչպես ասում են՝ «չավ սկիզբը գործի կեսն է»: Եվս մի նշանակալի համաձայնք. եթե քաղաքականությունը իրոջ ան-բարոյականություն է, անգամ այդ դեպքում այն բացարձակապես կապ չունի երկրում իրականացվող ներքին քաղաքականության ազգային բնույթի հետ: Դեկավարվելով կեղծ կարգախոսով, մենք ազգովին տեսանք, թե բարոյա-հոգեբանական ինչպիսի ավերածություններ գործեցին նախորդ իշխանություններն իրենց գործելակերպով: Չարկ է հաստատագրել, որ այն իշխանավորը կամ պաշտոնյան, ով կփորձի ղեկավարվել այդ կարգախոսով, ուրեմն նա ցանկանում է կանաչ ճանապարհ բացել իր կողմից ներկայում կատարվող և ապագայում կատարվելիք անօրինակությունների համար:

Սակայն, մենք վստահ ենք, որ թե՛ ՉՉ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և թե՛ նրան աջակցող քաղաքական ուժերը արժանավայել կերպով կընդունեն պատմության կողմից իրենց նետված վստահության մարտահրավերը:

“ԵՐԿԻՐ” թերթ 21 ապրիլ 1998թ.

ՀԱՅՈՑ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՐԱՏԱԿՈՐ ԵԼԵՎՏՆԵՐԸ

Հայոց անկախ պետականության տևական բացակայությունը մեր քաղաքական մտքի հետագա զարգացումների վրա չէր կարող արատավոր հետքեր չթողնել: Անշուշտ, նման իրողությունը կարելի է հասկանալ: Իսկ որոշակի պատմական ժամանակահատվածի համար, ինչու չէ, գտնել նաև համոզիչ բացատրություններ:

Երկարատև ընդմիջումից հետո մենք 1918-1920 թթ.ունեցանք անկախ պետություն, իսկ վերջինիս հիմքի վրա ստեղծվեց Հայկական ԽՍՀ-ն: ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով էլ Հայկական ԽՍՀ տարածքում մեր ժողովուրդը կրկին ձեռք բերեց քաղաքական անկախություն: Սակայն չխորանալով պատմության կնճոռտ ծալքերում, նշենք միայն, որ հայոց պետականության կորստի բազմաբնույթ և բազում պատճառները բոլոր ժամանակներում հիմնականում պետք է փնտրել ոչ թե աշխարհագրական ոչ բարենպաստ պայմանների, այլ տվյալ ժամանակաշրջանի կառավարող վերնախավի վարած քաղաքականության մեջ: Համենայնդեպս, Տիգրան Մեծին նույն աշխարհագրական տարածքի հիմքի վրա հաջողվեց հզոր Գոռմի և ոչ պակաս հզոր Պարսկաստանի հարևանությամբ ստեղծել ժամանակի ամենաուժեղ կայսրություններից մեկը: Իսկ Տիգրան Մեծի հաջորդներին չհաջողվեց ոչ միայն պահպանել պատմական Հայաստանի ամբողջականությունը, այլև մ.թ. 428թ. այն պարզապես մասնատվեց: Հիմնական պատճառը դարձյալ հայոց պետությունը ներկայացնող թագավորի և ազդեցիկ նախարարական տոհմերի միջև ՄԻԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ քաղաքայությունն էր:

Զգրված օրինաչափությամբ սիրում ենք մեր գործած բոլոր մեղքերը ԲԱՐՈՒԵԼ ԲՈՒՈՐԻ ՎՐԱ, բայց համարձակություն չունենք ընդունելու, որ դրանց առյուծի բաժինը եղել է մեր կառավարողների կողմից քույլ տրված կուպիտ սխալների հետևանքը: Պատմական երկար ճանապարհ անցած նման գործելակերպը մեր ժողովրդին որքան դժբախտություններ է բերել: Այդ գործելակերպը կենսունակ է նաև այսօր՝ ի դեմս Կոմկուսի և ԱԺ մի շարք պատգամավորների:

Ազգային քաղաքական մտքի ոչ միատարրությունը ժողովրդավարության մեծագույն արժեքներից ու նվաճումներից մեկն է: Սակայն աշխարհի ժողովրդավար ցանկացած երկրում էլ կան արժեքներ, որոնք նկատմամբ տվյալ ազգի ներսում գործող քաղաքական բոլոր ուժերի դիրքորոշումը բազարձակապես միատեսակ է: Այդ արժեքներից թերևս ամենաանձեռնմխելի են ազգային անկախ պետությունն է, որի պահպանումը ցանկացած «գույնի» քաղաքական ուժի սուրբ պարտականությունն է:

Անշուշտ, ոչ ոք չի կասկածում, որ մեր ազգի դարերի երազանքն է եղել ապրել քաղաքականապես ազատ ու անկախ երկրում: Հզոր մշակույթ ունեցող ժողովուրդը չի կարող դեմ լինել անկախ պետականու-

թյան գաղափարին ընդհանրապես: Հակառակ պարագայում ազգովին պիտի ընդունենք, որ քաղաքական անկախությունից կամավոր հրաժարվելու դեպքում քաղաքակիրթ աշխարհը ոչ միայն մեզ չի հասկանա, այլև պարզապես կդադարի հարգել: Իսկ մեզ համար անկախությունից հրաժարվելը հավասարազոր է ինքնասպանության: Ե՞րբ և ո՞ր դեպքերում է հնարավոր, որ ազգը կամավոր հրաժարվի քաղաքական անկախությունից:

ա) կա՞մ այդ ազգը տառապում է թերարժեքության բարդությով և ընդհանրապես չի հավատում սեփական ուժերին,

բ) նկատի ունենալով իր փոքրաթիվ լինելու հանգամանքը և արտաքին ուժերի կողմից իրեն սպառնացող վերահաս վտանգը, մտնում է այլ երկրի կազմի մեջ,

գ) կա՞մ երկրի ներսում ստեղծվել է քաղաքական, տնտեսական և սոցիալական բառասային այնպիսի վիճակ, երբ ազգը զրկվել է ինքն իրեն կառավարելու բոլոր հնարավորություններից և ինքնակազմակերպման ունակությունից:

Մենք խորապես հավատացած ենք, որ մեր ազգը ո՛չ տառապում է թերարժեքության բարդությով և ո՛չ էլ սպառել է սեփական ուժերին հավատարու բոլոր պաշարները: Իսկ Հայաստանին գոյատևման ներկա փուլում առաջմ չի կարող սպառնալ որևէ թշնամի պետություն: Ինչ վերաբերում է պետական-քաղաքական շրջանակներին և քաղաքական գործող ուժերի մեծամասնությանը, նրանք շարունակում են մնալ անկախ պետականության ջատագով:

Նույնը չենք կարող ասել մասնավորապես Կոմկուսի մասին:

Հայկոմկուսը կամ դեռ չի գիտակցում, որ իր գործունեության գաղափարաքաղաքական հիմքերը կորցրել է անվերադարձ, կամ էլ գիտակցաբար շահարկում է ժողովրդի որոշ մասի (հատկապես տարեցների, թոշակառուների) սոցիալ-տնտեսական ծանր վիճակը: Թե՛ Ռուսաստանում և թե՛ Հայաստանում կոմկուսը քաղաքական ապագա չունի (այստեղ այն դե ֆակտո ռուսական կոմկուսի մասնաճյուղն է): Հայկոմկուսը պետք է հասկանա, որ կան օբյեկտիվ օրենքներ և օրինաչափություններ, որոնք առավել հզոր են, քան նրա առաջնորդների քաղաքական շահարկումների բոլոր փորձերն ու ձգտումները միասին վերցրած: Այս իրողությունը նրանք որքան շուտ հասկանան, այնքան լավ և՛ իրենց, և՛ մեր ժողովրդի համար: Իսկ ինչ վերաբերում է ռուս-բելառուսական դաշինքին միանալու խնդրին, նման քայլի կատարումը չի կարող ինքնաճապատակ լինել: Ռազմավարական իրավահավասար գործընկերոջ կարգավիճակում երկու նկախ պետությունները՝ ուսաստանն ու Հայաստանը, ունեն համագործակցելու բոլոր հնարավորությունները: Իսկ եթե Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը պահանջում են զոհաբերել Հայաստանին ու նրա ռազմավարական շահերը, ինչպես ցույց տվեց վերջին յոթ տասնամյակների փորձը, դա ավելի

հեշտ է կատարվում, երբ մեր երկիրը գտնվում է նրա կազմում: Հայաստանի համար շատ ավելի դյուրին է մանրել իրը անկախ պետություն: Ի վերջո, Ռուսաստան-Բելառուս միությանը Հայաստանի միանալու քայլի քաղաքական իմաստավորումն է սխալ և ոչ թե նրա հետ համագործակցելու տրամաբանությունը: Հարցադրումը չպետք է կատարվի այնպես, թե քանի որ ամեն ինչ վաճառվում է Արևմուտքին և գնալով աճում է նրանից Հայաստանի ֆինանսական-տնտեսական կախվածության աստիճանը, իսկ արդյունքում սահմանափակվում է մեր երկրի՝ քաղաքական-դիվանագիտական առումով մանրելու դաշտը, հետևաբար՝ առավել նախընտրելի է, որ նույնը կատարվի Հայաստանի հետ՝ այս դեպքում Ռուսաստան-Բելառուս դաշինքի շրջանակներում: Փոխարենը՝ հարկավոր է իրականացնել ներքին և արտաքին այնպիսի քաղաքականություն, որ թե՛ չսահմանափակվի երկրի քաղաքական անկախությունը, թե՛ անրապնդվեն նրա տնտեսական հիմքերը:

Սա է գերխնդիրը, որ պետք է լուծեն մեր իշխանությունները:

* ԵՐԱՅԵՐԹ *
29.04.2000 թ.